ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ
2022-2023 թթ

Մեծ Բրիտանիայի Միացյալ Զինված ուժերի թագավորական ինստիտուտը (RUSI) պաշտպանության և անվտանգության ոլորտում աշխարհում առաջատար վերլուծական կենտրոններից է:

RUSI-ին հանդիսանալով գիտահետազոտական ինստիտուտ, իրականացնում է անկախ, գործնական և նորարարական վերլուծություններ՝ այսօրվա բարդ մարտահրավերները լուծելու համար: Նրա առաքելությունն է տեղեկացնել, ազդել և խթանել հանրային քննարկումներն ավելի անվտանգ և կայուն աշխարհի մասին:

Սույն հոդվածը հատկապես ուշագրավ է Ռուսաստանի Դաշնության Կուրսկի մարզում Ուկրաինայի Զինված ուժերի ներկայումս իրականացվող հարձակողական օպերացիայի կապակցությամբ և համեմատությամբ:

© RUSI, 2024
RUSI Special Report, July 2024

Համառոտ նկարագիր

Սույն զեկույցի նպատակն է ուսումնասիրել 2023 թվականին ուկրաինական հարձակման ձախողման պատճառները՝ ապագայում նման սխալներից զերծ մնալու և ՆԱՏՕ-ի զինված ուժերում հարձակողական մարտական հզորությունը վերականգնելու օգտակարության համար:

Ուկրաինական հարձակողական օպերացիաների սկզբնական հայեցակարգը խելամիտ էր: Պահանջվեց 12 զրահատանկային և մեքենայացված բրիգադներ ռազմաճակատի 30 կմ հատվածը ճեղքելու և յոթ օրվա ընթացքում Տոկմակը մեկուսացնելու, այնուհետև, Մելիտոպոլի ուղղությամբ դեպի հարավ ճեղքումը շարունակելու համար: Ենթադրվում էր, որ այդ տեմպը թույլ չի տա Ռուսաստանին կիրառել իր ուժերի մեծ մասը, որպեսզի գրոհող ուժերը կարողանան հաղթահարել պաշտպանությունում գտնվող միայն վեց գնդերի դիմադրությունը:

Այս հայեցակարգը չիրականացվեց ինչը պայմանավորված էր ինչպես Ուկրաինայի, այնպես էլ նրա միջազգային գործընկերների գործառնությունների սխալներով: Վերջիններս հարձակումից առաջ երկու վճռորոշ պահ բաց թողեցին: Նախ, մինչ 2022 թվականի մայիս ամիսը, երբ Ռուսաստանը նոր սկսեց անցնել ռազմական տնտեսության կազմակեպմանը, իսկ զորահավաքը սկսեց աշնանը, Ուկրաինայի միջազգային գործընկերները էական քայլեր չձեռնարկեցին իրենց արտադրական սահմանափակումները վերացնելու համար: Արդյունքում, թեև շատ պետություններ Ուկրաինային նվիրեցին իրենց ազգային պաշարների զգալի մասը, այն չկազմեց օպերացիաների հայեցակարգը իրականացնելու համար սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ)-ի պահանջվող կրիտիկական նվազագույն միջոցներով ապահովելու բավարար ծավալ:

Որոշման երկրորդ բաց թողնված պահը տեղի ունեցավ, երբ այդ ՍՌՏ-ն պետք է ժամաներ Ուկրաինա: Ուկրաինայի միջազգային գործընկերները չորս ամիս վատնեցին որոշում կայացնելու համար, այնպես որ մինչ հարձակումը խոստացվածի միայն մի մասը հասավ, իսկ ուկրաինական բրիգադները բավարար ժամանակ չունեին ստացված տեխնիկայի վրա մարզվելու համար: Այսպիսով, հարձակման սկզբում բրիգադները բավականաչափ պատրաստված չէին, ինչը պայմանավորեց գործողությունների ընթացքում թույլ տրված մարտավարական սխալների զգալի մասնաբաժինը:

Ուկրաինան նույնպես մի շարք սխալներ թույլ տվեց: Նախ, փորձառու զորքերը սովորաբար պահպանում էին շփման գիծը և իրականացնում հակառակորդի կողմից ճեղքված հատվածները փակելու գործողություններ, մինչդեռ հարձակման հիմնական ուժերը մեծմասամբ նոր էին ձևավորված: Արդյունքում հարվածային ուժերի մարտական փորձի պակասը հանգեցրեց գործողության ընթացքում մարտավարական սխալների: Երկրորդ, ուկրաինացի պլանավորողները խորացրին պատշաճ կերպով հագեցած ուժերի պակասը՝ հիմնական ուղղության հաշվին զորքերն ուղղելով մի քանի ուղղություններով, որից հետո միայն դրանք սկսեցին լրացուցիչ զինամթերքով և ապահովման համակարգերով մատակարարվել: Այս երկու սխալների համադրությունը սահմանափակեց ստորաբաժանումների արագ տեմպով գործելու և այն պահպանելու ունակությունը:

Ամենալուրջ սխալը, որը թույլ տվեց Ուկրաինան պլանավորման փուլում, ըստ երևույթին, այն հիմքն էր, որով որոշվեց, որ գործադրված ջանքերը կարող են հաջողությամբ պսակվել այդպիսի հանգամանքներում: Ռուսական վեց գունդ

ջախջախելու համար արագություն և կենտրոնացում օգտագործելու փոխարեն հույս ունեին, որ հարվածային գործողությունները կհանգեցնեն ռուսական զորքերի պաշտպանության ճեղքմանը, ինչը տեղի ունեցավ Խարկովում 2022 թվականին: Պլանավորումը գնահատելու համար, թե ինչպես կարելի է հասնել հակառակորդի բարոյահոգեբանական անկման կրիտիկական պայմաններին, անբավարար էր և, ինչպես ապացուցեցին իրադարձություններն, չափազանց լավատեսական: Նախնական գրոհները ձախողվեցին, և արագությունը կորավ, այնպես որ Ռուսաստանը կարողացավ այդ հատվածում մարտեր վարել 105,000 զինծառայողների ուժերով:

Թե՛ Ուկրաինայի, թե՛ նրա միջազգային գործընկերների համար դասն այն էր, որ անվտանգության օպերատիվ միջոցառումները անբավարար էին, այնպես որ Ռուսաստանը հստակ գիտեր, թե որտեղ, և մոտավորապես երբ է սկսվելու հարձակումը: Այս խնդիրը բարդանում էր նրանով, որ հարձակողական օպերացիաների համար պատշաճ կերպով հագեցած էին ընդամենը զույգ բրիգադներ և Ռուսաստանին բավարար էր հետևել միայն փոքր թվով ուկրաինական ստորաբաժանումներին որպեսզի որոշեր Ուկրաինայի մտադրությունները:

Հաշվի առնելով, որ այս անվտանգության բացակայությունը մասամբ պայմանավորված էր հարձակման կազմակերպման բազմազգ գործընթացով, անհրաժեշտ է որպեսզի ուսումնասիրվի ՆԱՏՕ-ի կողմից:

Այս հոդվածը պարունակում է բազմաթիվ մարտավարական դասեր: Դրանցից ոմանք, այնուամենայնիվ, հարցեր են բարձրացնում գոյություն ունեցող դոկտրինի առկա իրողությանը հարմարեցնելու անհրաժեշտության վերաբերյալ: Նախ, անհրաժեշտ է ունենալ արդյունավետ հակահետախուզական հնարավորություններ, որպեսզի նվազեցվի հակառակորդի կողմից հարձակման նախատեսվող ուղղությունների մշտական դիտարկումը: Հակառակորդի ՀՕՊ միջոցներից հարձակման ուղղությունները ծածկելու անկարողությունը ստեղծում է գերճշգրիտ միջոցներով երկարատև խոցման վտանգ, ինչը հանգեցնում է ՍՌՏ կորուստների անընդունելի մակարդակի:

Երկրորդ, անհրաժեշտ է ՌԷՊ միջոցներով պաշտպանություն և համապատասխան պահանջներ էլեկտրամագնիսական հրամանատվության ու վերահսկողության համար: Էլեկտրամագնիսական տիրույթում (ԷՄՏ) «յուրային կրակը» ժամանակակից պայմաններում լայնածավալ գործողությունների կառավարման հիմնական խնդիրն է: Հաշվի առնելով ԷՄՏ-ից կախված համակարգերի խտությունը և տվյալ տիրույթի համար ակտիվ պայքարը, ստորաբաժանման մակարդակում կոնֆլիկտային հաճախականությունները պարզապես վերացնելն աննպատակահարմար է:

Հարձակման ժամանակակ ի հայտ եկավ նաև, որ չնայած ծրագրային ապահովումով համակարգերը կարևոր նշանակություն ունեն ուժերի մրցունակության համար, դրանք նույնպես խոցելի են ՌԷՊ նպատակային խանգարումներով: Սա հատկապես վերաբերում է գերճշգրիտ զենքի (ԳՃԶ) հարվածներին: Ժամանակի ընթացքում հակառակորդը մշակեց ուկրաինական մի շարք համակարգերին (ներառյալ Excalibur արկը և GMLRS հրթիռը) հակազդելու հստակ միջոցներ:

Այսպիսով, ակնհայտ է, որ տեխնոլոգիական առավելությունների պահպանումը պահանջում է դաշտային պայմաններում համակարգերը արագ թարմացնելու ունակություն: Հակառակորդի մշտական դիտարկումը և հեռահար կրակի

համադրությունը նշանակում էր, որ երբ զորքերը անցնում էին հարձակողական գործողությունների, նրանց ցամաքային հաղորդակցությունները դառնում էր կանխատեսելի և թիրախավորված, արագությունը նվազում էր: Այնտեղ, որտեղ օպերացիանները պահանջում էին ճեղքվածքների փակում, կայունության խնդիրը դառնում էր անհաղթահարելի: Հարցը, թե ինչպես կարելի է հուսալիորեն պաշտպանել ճահճային անցումները՝ զորքերի տեղաշարժին աջակցելու համար պետք է դառնա ՆԱՏՕ-ի ուժերի ջանքերի կենտրոնացման կարևորագույն ոլորտը:

Վերջապես, ԳՃՁ կիրառումը, նույնիսկ մարտավարական մակարդակներում, չափազանց խոցելի է դարձնում հարձակողական ճեղքման բարձրարժեք տրանսպորտային միջոցները, ինչպիսիք են ականազերծող մեքենաները: Առանց այդպիսի շարժունակ միջոցների չկա մաններելու հնարավորություն: Հետևաբար, ՆԱՏՕ-ի զինվորականները պետք է մանրակրկիտ ուսումնասիրեն, թե ինչպես կարելի է մեծացնել աջակցող ստորաբաժանումների խտությունը՝ առանց ուժերը ծանրաբեռնելու, կամ ինչպես կարելի է աջակցող այլ միջոցների հնարավորություններով լրացնել, օրինակ՝ ստորաբաժանումների բնական շարժունակությունը բարձրացնելու ուղղությամբ: Հատուկ աջակցող միջոցների փոքր խմբերից կախվածությունը գնալով ավելի անարդյունավետ է դառնում, երբ հակառակորդն ի վիճակի է խմբավորման կազմում ճանաչել և խոցել հստակ թիրախները, և ի վիճակի է դա անել ամբողջ օպերացիայի ընթացքում:

Ավելանում է այն ժամանակը, որն Ուկրաինային անհրաժեշտ է հարձակողական մարտական հզորությունը վերականգնելու համար: Սա նշանակում է, որ տեսանելի ապագայում հարձակողական գործողությունների վերսկսումը նպատակահարմար չէ: Այդ նպատակով Ուկրաինան առժամանակ պետք է փոխի առաջնահերթությունները և հնարավորինս մեծ վնաս հասցնի ՌԴ ԶՈՒ-ին, որպեսզի շահի անհրաժեշտ ժամանակը: Միարժամանակ, Ուկրաինան, ամենայն հավանականությամբ, կշարունակի Ռուսաստանի եկամուտների ստացման ուղիները սահմանափակելու փորձերը՝ հարվածներ հասցնելով ՌԴ ենթակառուցվածքներին: Ժամանակը կարելի է շահել, թեկուզ և մեծ գնով: Ուկրաինայի և նրա միջազգային գործընկերների հարցն այն է, թե ինչ անել դրա դեմ:

Ներածություն

2023 թվականին Ուկրաինան հարձակողական գործողություններ սկսեց՝ փորձելով ճեղքել ռուսական պաշտպանական բնագծերը և փակել Ղրիմի ցամաքային միջանցքը: Այդ նպատակներից և ոչ մեկը հաջողությամբ չպսակվեց: Անհաջողության պատճառները հասկանալը կենսական նշանակություն ունեն Ուկրաինայում ապագա գործողությունների պատշաճ պլանավորման և ռեսուրսների ապահովման համար. . .

Զեկույցում ուսումնասիրվում են մարտավարական դասերը, որոնք հիմնականում վերաբերվում են հարձակման օպերատիվ թերություններին, որոնք կապված են պլանավորման, օպերատիվ որոշումների, կարևորագույն միջոցների և մոբիլիզացիայի բացարձակ բացակայության, ուժերի ձևավորման ու նյութատեխնիկական ապահովման խնդիրների հետ: Զեկույցում փորձ է արվում լույս սփռել այն բանին, թե ուկրաինացի զինվորականները որոշումներ կայացնելու որքան ներուժ ունեն և իրականում որտեղ են գտնվում որոշումներ կայացնելու կետերը: Օրինակ՝ կրիտիկական զանգվածի կենտրոնացման հետ կապված խնդիրները…

Զեկույցը գրվել է Ուկրաինայի ԶՈՒ (ՈՒԶՈՒ) Գլխավոր շտաբի հետ համագործակցությամբ և հիմնված է է 2023 թվականի ընթացքում մարտավարական, օպերատիվ ու ռազմավարական շարակարգերի ուկրաինացի հրամանատարների և զինվորականների հետ հարցազրույցների վրա: Այն նաև տրամադրում է ՈՒԶՈՒ ԳՇ օպերատիվ տվյալների հիման վրա զորքերի թվաքանակի, կորուստների և ստորաբաժանումների հագեցվածության մակարդակի վերաբերյալ տվյալներ: Հեղինակները նաև սերտորեն համագործակցել են ՈՒԶՈՒ ԳՇ Փորձի ընդհանրացման բաժնի հետ, որը պատասխանատու է ԶՈՒ պատրաստության, մարտավարության և կազմակերպման փոփոխությունների մշակման համար: Բացի այդ, հեղինակները Ուկրաինայի հարձակման ընթացքում ակտիվորեն համագործակցել են միջազգային գործընկերների հետ…

Զեկույցը բաղկացած է չորս գլխից. Ա գլխում նկարագրվում են հրամանատարության որոշումները, որոնք ազդել են ուկրաինական գործողությունների ընթացքի վրա 2022 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականի հունիսի հարձակման սկիզբը: Այստեղ նկարագրվում է հիմնական համատեքստը և ուժերի հարաբերակցությունը: Բ գլուխում նկարագրվում է ուկրաինական հարձակողական գործողության փուլերը, որն ավարտվեց 2023 թվականի հոկտեմբերին: Գ գլուխում վերլուծվում է հակամարտությանը բնորոշ գործոնները, որոնք նպաստեցին Ուկրաինայի ձախողմանը ամառային հարձակման ժամանակ: Դ գլուխը վերաբերվում է մարտավարական և օպերատիվ մարտահրավերներին, որոնք նոր են և հաշվի չեն առնվել Ուկրաինայի միջազգային գործընկերների առկա դոկտրինում, բայց որոնք առընչություն ունեն ՆԱՏՕ-ի երկրներում հարձակողական մարտական ուժերի վերականգնման հետ:

Ա. Օպերատիվ համատեքստ

2022 թվականի հուլիսին ՈՒԶՈՒ դադարեցրեց ՌԴ ԶՈՒ հարձակումը Դոնբասում: Կար երեք գործոն, որոնք հանգեցրեր ռուսական հարձակման կասեցմանը: Հակամարտության սկզբնական փուլում Ռուսաստանը զգալի կորուստներ ունեցավ իր լավագույն ստորաբաժանումների կազմում, որոնք, ամենայն հավանականությամբ, ոչ պատշաճ կերպով էին կազմակերպված լայնածավալ հարձակողական գործողությունների համար, և, հետևաբար, դժվարացավ հարձակողական տեմպի պահպանումը: ՌԴ ԶՈՒ-ն այս թերությունը լուծելու համար հզորացրեց կրակային ճնշումը: 2022 թվականի հունիս-հուլիսին Ուկրաինայի կողմից ԳՃԶ կիրառումը ոչնչացրեց ռուսական նյութատեխնիկական ապահովման ենթակառուցվածքը, ռուսական զորքերին զրկելով առավելությունից: Մի քանի ամիս տևած պաշտպանական հյուծիչ օպերացիաներից հետո դա Ուկրաինային առաջին հնարավորությունը տվեց իր ձեռքն վերձնելու նախաձեռնությունը:

Ուկրաինայի քաղաքական ղեկավարության համար պլանավորման որոշիչ գործոնն էր միջազգային աջակցության երկարակեցության անորոշությունը: Ի վերջո, Ուկրաինան կարող էր պարտություն կրել երկու ճանապարհով. ՈՒԶՈՒ-ին կարող էին ջախջախվել մարտի դաշտում, կամ միջազգային աջակցության դադարեցումը կարող էր նրանց թողնել առանց զենքի և զինամթերքի: 2022 թվականի ամռանը Ուկրաինան սպառել էր զինամթերքի ամենակարևոր տեսակների սեփական պաշարները և, հետևաբար, կախված էր միջազգային աջակցությունից: Ենթադրվում էր նաև, որ տրամադրվող տեխնիկայի հոսքը երկար չի տևի, եթե Ուկրաինայի

միջազգային գործընկերները չտեսնեն պատերազմի բարենպաստ ավարտի իրական ուղին։ Այսպիսով, ՈՒԶՈՒ-ի քաղաքական ղեկավարությունը երկակի էր։ Նախ, ռեսուրսներ տրամադրելու համար Ուկրաինայի միջազգային գործընկերների կողմից պետք է հաստատվեր Ուկրաինայի զինուժի կողմից մշակված հարձակողական գործողությունների պլանը։ Երկրորդ՝ խորհրդանշական նշանակություն ունեցող հաջող հարձակողական գործողությունները պետքէ տեղի ունենային մոտ ապագայում…

Պատերազմի ընթացքի վրա ազդեցության տեսանկյունից, հաջողության դեպքում, առավել գրավիչ պլանը Զապորոժյեից դեպի Մելիտոպոլ ընկած հատվածում առաջխաղացումն էր և դրանով իսկ Ղրիմի ելքի զմրսումը։ Միաժամանակ Խերսոնի շրջանում կտրելով Դնեպրի աջ ափը ռուսական զորքերը կզրկվեին մատակարարման ուղիներից։ Այս առանցքը խիստ ռիսկային էր. հետևանքը կլիներ երկար և բարակ սեպը՝ թևերից ռուսական զորքերով շրջառված։ Եթե ռուսները ագրեսիվ պատասխանեին, ապա այս հարձակումը կարող էր ձախողվել. այն շատ կմոտենար Ուկրաինայում կենտրոնացված ռուսական զորքերի հիմնական շրջաններին, որոնք այն ժամանակ տեղակայված էին հենց այդ առանցքը փակելու նպատակով։ Այնտեղ գտնվող շատ ռուսական զորամասեր չէին մասնակցել Դոնբասի հարձակմանը և տեխնիկայի ու անձնակազմի ավելի քիչ կորուստներ ունեին։ Ուստի, որոշվեց մի քանի բրիգադ ուղարկել Դնեպրի աջ ափին գտնվող ռուսական զորքերը ջախջախելու և Խերսոնը ազատագրելու համար։ Ի դեպ գետը ռուսների հակագրոհի դեպքում պետք է պաշտպաներ ուկրաինական զինուժին հանդիսանալով բնական խոչնդոտ…

… Ի վերջո, ռուսական մատակարարման ուղիների վրա ճնշումը հանգեցրեց նրան, որ 2022 թվականի հոկտեմբերին և նոյեմբերին Մոսկվան ստիպված էր կազմակերպված դուրս բերել զորքերը Խերսոնից։

2022 թվականի ամռանը ռուսական զորքերի առջև ծառացած ավելի լայն օպերատիվ խնդիրն այն էր, որ սկզբնական ներխուժման ուժերը չափազանց փոքրաթիվ էին ռազմաճակատի ամբողջ լայնությամբ զորքերի բավարար կենտրոնացումն ապահովելու համար։ Քանի որ Խերսոնի օպերացիայի ընթացքում գործի էին դրվել ռուսական ռեզերվները, հարց էր առաջանում, թե արդյոք Ուկրաինայի զինուժը կկարողանա՞ ճնշում գործադրել ռազմաճակատի մեկ այլ հատվածում։ Հարձակման համար լավագույն վայր ճանաչվեց Խարկովի մարզը, որն ուներ մի քանի գրավիչ կողմ։ Նախ, ռուսական բանակն այնտեղ բավարար ուժեր չուներ՝ ստորաբաժանումները մեծ կորուստներ էին կրել Դոնբասի հարձակման ժամանակ։ Երկրորդ, ստեղծված իրավիճակում Իզյումը հանդիսանում էր Դոնբասի ուղղությամբ հետագա հարձակումների մեկնարկային կետ, մինչդեռ ռուսները գտնվում էին Խարկովի արվարձաններից հրետանու հասանելիության գոտում։ Վերջին հանգամանքը, հաշվի առնելով Խարկովի կարևորությունը որպես խոշոր բնակավայրի տարածք, այն դարձրեց առաջնահերթ առանցք։ Ռուսական զորքերը ստիպված էին միայն հետևել Խարկովի ուղղությամբ ուկրաինական զորքերի կուտակմանը, քանզի պատասխան տալու ուժերը տեղափոխել էին հարավ։ Խելամիտ է նաև եզրակացնել, որ թեև Ուկրաինան չհասավ իր մտադրությունների հանկարծակիությանը, այնուամենայնիվ հասավ դրան հարձակման ժամանակի առընչությամբ։ Արդյունքը գերազանցեց Ուկրաինայի սպասելիքները՝ ռուսական ուժերի Արևմտյան խմբավորումը փլուզվեց։ Ճակատագրի հեգնանքով, թեև առաջնահերթ էր համարվում Խերսոնի ազատագրումը, Խարկովի ձեռքբերումների

անսպասելի արագությունն ու ծավալը չափազանցված ազդեցություն ունեցավ՝ համոզելով Ուկրաինայի միջազգային գործընկերներին, որ հարձակողական գործողությունների ռեսուրսներով ապահովումը կարող է արդյունքներ բերել՝ դրանով իսկ հասնելով օպերացիայի քաղաքական նպատակներին…

Խոշոր հարձակման պլանի ընդհանուր ուրվագծերը մշակվել էին դեռևս մինչև 2022 թվականի սեպտեմբեր ամիսը: Խերսոնի և Խարկովի հարձակողական օպերացիաների հաջողությունները քաղաքական համոզմունք առաջացրին՝ Ռուսաստանի կողմից վերհսկվող նոր տարածքների ազատագրման հնարավորության նկատմամբ: Սա դրդեց Ռամշտայնի գործընթացի սկսմանը, որի շրջանակներում Ուկրաինայի միջազգային գործընկերները պարտավորվեցին նյութական միջոցներ և այլ աջակցություն տրամադրել, ինչպես նաև սկսել Ուկրաինայի դաշնակիցներից ՍՌՏ-ի տեսքով նվիրատվությունների հավաքագրումը: Ցավոք, կոնկրետ նվիրաբերությունները ճշտելու և համաձայնեցնելու գործընթացի համար պահանջվեց գրեթե երեք ամիս, և պարտավորությունները հայտարարվեցին միայն 2023 թվականի հունվարին: Կորցրած ժամանակի գինը թանկ ու դառն էր: Այս գործընթացի ընթացքում նկատվեց նաև հստակ լարվածություն պլանը գործընկերներին հաղորդելու անհրաժեշտության և օպերատիվ անվտանգության պահանջների միջև:

Ցավոք, ինչպես ուկրաինական կողմի հաղորդագրությունները, այնպես էլ արևմտյան պաշտոնյաների շահարկումներն արդեն 2022 թվականի դեկտեմբերին հստակ պատկերացում էին տալիս Ուկրաինայի գարնանային հարձակման և դրա հնարավոր նպատակների մասին: Մոսկվան այս քննարկումները ընդունելով ի գիտություն ռազմաճակատի կայունացման մի քանի միջոցառումներ ձեռնարկեց, ինչն արմատապես փոխեց իրավիճակը ՈՒԶՈՒ-ի հետագա հարձակման համար: Նախ, զորքերի թվաքանակն ավելացնելու համար ՌԴ ԶՈՒ-ն զորահավաք հայտարարեց այն բանից հետո, երբ Խարկովում ուկրաինական ճեղքումը մատնացույց արեց, թե որքան են ձգված ռուսական ուժերը: Երկրորդ, 2012 թվականի սեպտեմբերի 23-ին ՌԴ ԶՈՒ-ն Դնեպրի աջ ափից հեռացավ Խերսոնով՝ գետը վերածելով բնական պաշտպանական պատնեշի, ինչով ապահովեց իր թևերը: Երրորդ, Զապորոժիեի շրջանում՝ Ղրիմի հետ սահմանի մատույցներում ռուսները սկսցի պաշտպանական բնագծերի կառուցման նպատակային շինարարությունը:

Զորահավաքը չէր կարող ապահովել լավ պատրաստված զինվորների արագ հավաքագրմանը: Պաշտպանական բնագծերի կառուցման համար նույնպես ժամանակ էր պահանջվում: Հետևաբար, 2023 թվականի հունվարի վերջին Ռուսաստանը ձեռնարկեց հարձակողական գործողություն Ուգլեդարի մատույցներում, որը արագորեն տարածվեց արևելյան ռազմաճակատի մեծ մասում՝ հատուկ ուշադրություն դարձնելով Բախմուտ քաղաքին: Վատ պատրաստված հարձակումը և անբավարար վարժեցված զորքերը, չափազանց թանկ արժեցավ ռուսների համար, բայց հրամանատարությունը, ըստ երևույթին, համոզված էր, որ անձնակազմի կյանքի գնով կարելի է ժամանակ շահել:

Ռուսական զորահավաքն Ուկրաինայի զինուժին բարդ դրության մեջ դրեց՝ մարտավարական հաջողությունները ժամանակի ընթացքում կարող էին Ուկրաինային ավելի խոցելի դարձնել օպերատիվ առումով: Դրանով է բացատրվում այդքան երկար բանավեճը Բախմուտի պաշտպանությանը ՈՒԶՈՒ-ի ծախսած ջանքերի շուրջ: Հրետակոծությունների արդյունքում մարդաթափվելուց հետո քաղաքն ինքնին մեծ արժեք չէր ներկայացնում: Սակայն Ուկրաինայի ԳՇ-ն

մտահոգված էր, որ եթե Բախմուտը հանձնվի առանց կռվի, ՌԴ ԶՈՒ հաջորդ թիրախը կլինի Չասով Յարը: Այն ոչ միայն գտնվում էր բարձունքի վրա, ինչի գրավումը կհեշտացներ հետագա հարձակողական գործողությունները, այլև Կոնստանտինովկայից երկաթուղային և ցամաքային հաղորդակցությունները կդներ ռուսների կրակային հսկողության տակ, և կհանգեցներ նրան, որ Կրամատորսկը կհայտնվեր ռուսական հրետանու հասանելիության գոտում՝ սպառնալով նրան ամայացմանը: Ավելին, առանց Բախմուտի մարտերի, ռուսները ՈՒԶՈՒ-ին կստիպեին պայքարել այլ կենսական տարածքների համար այն ժամանակ, երբ ուկրաինացիների նպատակադրվել էին ռեսուրսները ուղղել այլ վայրերում հարձակողական գործողություններ վարելուն…

… Սակայն քաղաքական տեսանկյունից, Ուկրաինայի կառավարությունը կարծում էր, որ Բախմուտը լքելը զգալի ռիսկ է պարունակում: Զորքերի դուրսբերման մասին որոշում ընդունելու պահը համընկավ Ուկրաինային կրիտիկական նշանակության ՍՌՏ-ով մատակարարման վերաբերյալ մի քանի առանցքային որոշումների հետ, այդ թվում՝ նախատեսված հարձակման համար տանկերով և այլ զինամթերքով ապահովման (հիմնականում Գերմանիայից) հետ:

2023 թվականի փետրվարին ուկրաինական հարձակման ծավալը որոշվել էր Ուկրաինայի գործընկերների կողմից մատակարարվող տեխնիկայի ծավալի և դրա իրականացման համար ներգրավված զորքերից հաշվառումով: Որից հետո Ուկրաինան և նրա գործընկերները ձեռնամուխ եղան ստորաբաժանումների վերազինմանը և վերապատրաստմանը: Բախմուտի մարտերի ընթացքում առաջացած խնդիրն այն էր, որ զոհվածներից շատերը փորձառու զինծառայողներ էին, ովքեր կարող էին օգտագործվել նոր ստորաբաժանումներում՝դրանց մարտավարական արդյունավետությունը բարձրացնելու համար: Փոխարենը, մինչ փորձառու զորքերը զսպում էին ռուսների գրոհները, հարձակման համար պատրաստվում էին նոր ստորաբաժանումներ:

2023 թվականի մարտին Ուկրաինան ստացավ նոր ՍՌՏ: Հաշվի առնելով ՆԱՏՕ-ի երկրներում դրա սահմանափակ քանակությունը, որոնք երեք տասնամյակ ընթացքում շարունակաբար կրճատվել էին՝ անհատույց տրամադրվածը կազմում էր ազգային պաշարների զգալի մաս: Այստեղ կարևոր է անդրադառնալ հակամարտության ծավալին, քանի որ ընդգծվում է այն աստիճանը, որով Ուկրաինայի շատ միջազգային գործընկերներ սկսեցին կախված լինել ռազմական տեխնիկայի պաշարներից: Այն ակնհայտորեն չափազանց փոքր էր առաջադրված նպատակները իրականացնելու համար… 2023 թվականի ուկրաինական հարձակումն ուղեկցվեց ռազմական գործողությունների ծավալները գնահատելու արևմտյան պաշտոնյաների անկարողությամբ, ինչը հանգեցրեց ակնկալիքների և արդյունքների մշտական անհամապատասխանության: Այս «հայփը» սրվել է ուկրաինական տեղեկատվական օպերացիաների արդյունքում…

… տեխնիկան, որոնցով վերապատրաստվել էին ուկրաինացի զինծառայողները, շահագործման, հնարավորությունների և սպասարկման պահանջների առումով տարբերվում էին Ուկրաինա ներմուծացներից (որպես կանոն, առանց շահագործման ձեռնարկների կամ պահեստամասերի): Արդյունքում, հարձակման համար պատրաստված ստորաբաժանումներում բացակայում էր մարտական փորձ ունեցող կրտսեր հրամկազմը, այդ ստորաբաժանումներն անցել էին արագացված մարտավարական պատրաստություն տեխնիկայի մի տեսակով (իսկ մարտնչում էին

այլ տեսակով), և սահմանափակ էին ստացված սակավաթիվ մարտական տեխնիկայի սպասարկման և շահագործման հնարավորությունները:

Հարձակման համար ստեղծված ուկրաինական բրիգադների մարտունակությունը բարձրացնելու համար ավելի շատ ժամանակ էր պահանջվում: Սակայն ժամանակ նույնպես չկար, քանի որ դա Ռուսաստանին հնարավորություն կտար ընդլայնել և խորացնել իր պաշտպանական բնագծերը, ինչպես նաև ավելի շատ զորք կհավաքագրվեր և կվարժեցվեր: Քանի որ ռուսական ուժերի կուտակումն ավելի արագ էր ընթանում, քան ուկրաինականը, գալու էր մի պահ, որից հետո հարձակումն անհնարին էր դառնալու: ՆԱՏՕ-ի ղեկավարների համար առանցքային դասն այն էր, որ քաղաքական գործիչների նախընտրությունը՝ հետաձգել որոշումների կայացումը, պատերազմում չափազանց թանկ արժե: Ճիշտ այնպես, ինչպես Ռուսաստանը բարձր գին վճարեց 2022-ի ապրիլին զորահավաք չիրականացնելու համար, այնպես էլ Ուկրաինան տուժեց զորահավաքը չընդլայնելու դեպքում, այնինչ 2022-ի սեպտեմբերին Ուկրաինայի գործընկերները պարտավորվել էին լիարժեք մարզել և վերազինել ՈՒԶՈՒ-ն:

Հարձակումը պլանավորելիս ՈՒԶՈՒ ԳՇ-ն մշակել էր հարձակման ուղղությունների հինգ տարբերակ: Առաջինը Բախմուտի շրջանում գտնվող Արևելյան ուղղությունն էր: Այս առանցքքում մանևրելու ամենամեծ ազատությունն էր ստեղծվում, սակայն առկա չէին ուղղության նպատակները, որոնք կարող էին փոխել հակամարտության տրամաբանությունը՝ բացառությամբ, եթե ուկրաինական զինուժին հաջողվեր շրջապատել կամ մեկուսացնել ռուսական զորքերի խոշոր խմբավորումը: Դա քիչ հավանական էր: Մնացած բոլոր տարբերակները ուղղված էին Ղրիմի ցամաքային ելքի ֆիզիկական կամ կրակային վերահսկողության հաստատմանը, ինչը պետք է ուղեկցվեր Սևծովյան նավատորմի հեռացմամբ՝ Ղրիմը մեկուսացնելու և դրանով իսկ պատերազմի ընթացքը փոխելու համար: Երկրորդ առանցքը նախատեսում էր դեսանտային գործողություններ Դնեպրի ձախ ափին: Դա թույլ կտար շրջանցել Ռուսաստանի պաշտպանական բնագծերի մեծ մասը, բայց ուկրաինական զորքերը կառերեսվեին մատակարարման նույն խնդրին, ինչը խարխլեց Խերսոնի ռուսական պաշտպանությունը:

Դեպի հարավ տանում էր երեք առանցք: Ամենաարևմտյանը պետք է անցներ բլրաշղթայի երկայնքով, Դնեպրին զուգահեռ, Վասիլևկայի միջով: Այստեղ գրավիչ պահ կար: Նախ,դա թույլ կտար շրջանցել ռուսական պաշտպանական բնագծերի ամենախիտ շրջանները: Դրական կողմն այն էր, որ առանցքի զգալի մասը ժամանակին ծառայել էր որպես ուկրաինական զորավարժարան, այնպես որ շատ սպաներ ծանոթ էին տեղանքին: Կային նաև թերություններ. նախ, սկզբնական փուլում անհրաժեշտ էր երկու գետանցում:Երկրորդ, դա կհանգեցներ նեղ ճակատով ուկրաինական զորքերի առաջխաղացմանը՝ Դնեպրին սեղմվելու սպառնալիքով: Երրորդ, այս առանցքը մարտական գործողությունները կմոտեցներ Զապորոժիեի (Էներգոդարի) ԱԷԿ-ին՝ վտանգելով վնասել կամ շարքից դուրս հանել այն:

Վերջին երկու ուղղությունները Օրեխովից անցումն էր դեպի Բերդյանսկ՝ Տոկմակի Մելիտոպոլի և Վելիկի Նովոսելկայի միջով: Այս ուղղություններում ռուսական պաշտպանության խտությունը իր կենտրոնացմամբ մի փոքր ավելի մեծ էր քան առաջինում, ուստի երկրորդով հաջողության հասնելու համար շատ ավելի մեծ առաջընթաց էր պահանջվում: Հաշվի առնելով այս բոլոր գործոնները՝ Օրեխով–Տոկմակի ուղղությունը որոշվել էր որպես ուկրաինական կողմի հիմնական ջանքերի կենտրոնացման ուղղություն: Միևնույն ժամանակ, վճռական գործողություններ էին

նախատեսվում Բախմուտի ուղղությամբ և սպառնալից գործողություններ՝ Դնեպրի ձախ ափին, որպեսզի թույլ չտան ռուսական զորքերի տեղափոխումը Տոկմակի պաշտպանությունը ամրապնդելու համար…

ՌԴ ԶՈՒ-ն լավատեղյակ էր ուկրաինական պլանների մանրամասնություններին: Հաշվի առնելով ուկրաինական կողմի հաղորդագրությունները, ԱՄՆ-ից գաղտնի տեղեկատվության արտահոսքը և տեղանքի վերլուծությունը, ռուսներին հնարավորություն տվեց պաշտպանությունը կենտրոնացրել Օրեխով–Տոկմակ հատվածում: Այսպիսով, հարձակման սկսվելու պահին ուժերի հարաբերակցությունը Ուկրաինայի համար անբարենպաստ էր:

Ըստ հարձակման պլանի նախատեսվում էր, որ Ուկրաինան գործի կդնի 12 բրիգադ: Նախնական մտահղացման համաձայն՝ երեք բրիգադները պետք է աջակցեին արևելքում ռուսական զորքերի կաշկանդման գործողություններին, այնուհետև երեք զրահատանկային բրիգադներ պետքէ ճեղքեին Ռուսաստանի պաշտպանության բնագիծը, իսկ երեք մեքենայացված բրիգադներ պետք է առաջանային երկրորդ շարակարգով՝ Տոկմակը պաշտպանող ռուսական զորքերը ջախջախելու համար: Վերջին երեք բրիգադները պետք է գործեին որպես հաջողությունը զարգացնող ուժեր: Սկզբունքորեն, բեկումը պետք է իրականացվեր յոթ օրվա ընթացքում: Այդպիսի տեմպը նշանակում էր, որ ուկրաինական զորքերը պետք է ջախջախեին ՌԴ ԶՈՒ-ի վեց գունդ՝ ապահովելով տեղում ուժերի բարենպաստ հարաբերակցություն:

Գործնականում նախնական պլանը չէր կարող իրականացվել հարձակման սկսվելու պահին, քանզի բրիգադների հագեցվածությունն ու մարտունակությունը ցածր էր: Հարձակմանը մասնակցած բրիգադներից երեքը պատկանում էին Ուկրաինայի Ազգային գվարդիային (3-րդ, 14-րդ և 15-րդ բրիգադներ), իսկ մնացածը կազմում էին Ուկրաինայի զինված ուժերի երեք մարտավարական խմբեր: Վերջիններս կոչվում էին կորպուսներ (9-րդ, 10-րդ և «Մարուն»), թեև դրանք հաստատ կորպուսներ չէին ոչ ՆԱՏՕ-ի, ոչ էլ Ուկրաինայի չափանիշներով՝ նրանց պակասում էր կորպուսի շարակարգի զորքը կամ համախմբվածությունը, որն անհրաժեշտ էր որպես միավորում գործելու համար: Լավագույն դեպքում, դրանք դիվիզիայի չափի հասցված ստորաբաժանումներ էին, որոնք չունեին դիվիզիային կամ բրիգադին բնորոշ բավարար քանակությամբ ապահովման ստորաբաժանումներ: Լիարժեք զրահատանկային և մեքենայացված բրիգադների փոխարեն, մարտավարական խմբերից յուրաքանչյուրը բաղկացած էր երկու-երեք մեքենայացված գումարտակից՝ առանց լրացուցիչ մեքենայացված ստորաբաժանումների: Բրիգադներին ենթակա էին մի քանի կարևոր ապահովման ստորաբաժանումներ: Մանևրի սկզբնական սխեման այն էր, որ 9-րդ կորպուսը պատասխանատու էր ռուսական պաշտպանական գոտու ճեղքման համար, այնուհետև 10-րդ կորպուսը պետք է հասներ Տոկմակ, իսկ «Մարուն»-ը՝ պետք է գրոհեր Մելիտոպոլի ուղղությամբ: Քանի որ պահանջվող տեմպերով պլանն իրականացնելու համար այս բրիգադները չունեին բավարար ՍՌՏ կամ պատրաստակամություն, ռուսները, օգտագործելով ընձեռնված ժամանակը, իրենց ուժերը գործի դրեցին օպերացիայի տարածքում, ինչը փոխեց ուժերի հարաբերակցությունը ի օգուտ ռուսների:

Ուկրաինական զորքերի առջև կառուցվել էր երեք պաշտպանական բնագիծ, որոնք ներառում են ապահովման գոտի և պաշտպանության առաջնագիծ, հիմնական և պահեստային պաշտպանական բնագծեր՝ մոտ 30 կմ ընդհանուր խորությամբ: Դրանք պաշտպանում էին ՌԴ ԶՈՒ 7-րդ օդադեսանտային և 42-րդ մոտոհրաձգային

դիվիզիայաների ուժերը: Այսպիսով, յուրաքանչյուր 10 կմ պաշտպանության համար ռուսները ունեին մեկ մոտոհրաձգային գունդ (70-րդ, 71-րդ և 291-րդ գնդեր առանցքի ամբողջ ճակատում) և մեկ օդադեսանտային գունդ: Երկրորդ բնագծում էին 56-րդ, 108-րդ և 247-րդ գնդերը: Ներգրավված էին նաև ՌԴ ԶՈՒ ծովային հետևակի 810-րդ բրիգադը և ծովային հետևակի 177-րդ գնդի գումարտակներից մեկը: Ընդհանուր առմամբ, 58-րդ համազորային բանակի հրամանատարության ներքո պաշտպանության գոտի տեղափոխելու համար հասանելի էին երկու մոտոհրաձգային (19-րդ և 42-րդ) և երկու օդադեսանտային դիվիզիաներ (7-րդ և 76-րդ՝ կազմված 104-րդ, 234-րդ և 347-րդ գնդերից): Առանձնացվել էին նաև լրացուցիչ հրետանային ուժեր, այդ թվում՝ 439-րդ հրետանային բրիգադը, որը համալրված էր Торнадо-С ՀԶԿՌՀ-ով: Ուկրաինական հարձակման սկզբում ռուսները 35 օրվա զինամթերքի պաշարներ էին կուտակել կրակային դիրքերի մերձակայքում, ինչը կազմում էր օրական պաշարների երեք մարտական լրակազմ: Բացի այդ, ռուսները գործի էին դրել մոտ 60 մարտական ուղղաթիռ:

Հարկ է նշել, որ թեև 2022 թվականին ՌԴ ԶՈՒ-ն գումարտակային մարտավարական խմբերից վերադարձել էր ուժերի նախկին (դիվիզիա, գունդ) կառուցվածքին: Այդ ժամանակ նրանց ստորաբաժանումների կազմը փոքր-ինչ անկանոն էր: Շատ գումարտակներ ներառում էին Шторм-Z վաշտեր, տարածքային և այլ աջակցող ստորաբաժանումներ, բայց, միևնույն ժամանակ, նրանց մարտակարգերում բացակայում էին որոշ ավանդական տարրեր: Այսպիսով, վերը նշված ստորաբաժանումների նշանակումները պետք է ընկալվեն ոչ թե որպես մարտակարգի նշանակում, այլ ավելի շուտ որպես ռուսական բանակի պաշտպանական շարակարգի հրամանատարության և վերահսկողության տարրեր (C2): Ընդհանուր առմամբ ռուսները Օրեխով–Տոկմակ–Մելիտոպոլ առանցքի պաշտպանությանը ներգրավվել էին 105,000 զինծառայող, մոտ 470 տանկ, մինչև 1410 ՀՄՄ, ավելի քան 720 հրետանային համակարգ, մինչև 230 ՀԿՌՀ և 12 օպերատիվ–մարտավարական հրթիռային համակարգեր: Այդուհանդերձ, եթե ուկրաինական ուժերը նախնական պլանով նախատեսված տեմպերին հասնեին, ապա կդիմակայեին այդ ուժերի միայն 30%-ին:

Պլանով նախատեսված մտահղացումը իրականացնելու համար չունենալով բավարար ուժ, ուկրաինացի պլանավորողները, այնուամենայնիվ, կարծում էին, որ անհրաժեշտ է հարձակման փորձ կատարել, և, հետևաբար, սկսեցին ենթադրել, որ եթե սկզբնական հարվածի ընթացքում բավարար ճնշում գործադրվի, ապա կկարողանան գրոհել քանակապես գերազանցող հակառակորդի վրա՝ կոտրելով նրա բարոյահոգեբանական ոգին: Ռուսական պաշտպանական բնագծերը ջախջախելու մեխանիզմը հիմնված էր խորը հարվածի և լոկալ փլուզում առաջացնող շոկային գործողությունների վրա: Ենթադրվում էր, որ հետագայում դա կհանգեցնի մաններային պաշտպանության, որի արդյունքում ռուսական զորքերը կկորցնեն համախմբվածությունը: Սրանք շատ լավատեսական ենթադրություններ էին…

Բ. 2023 թվականի ուկրաինական հարձակումը

Մայիսի կեսերին Ուկրաինան Բախմուտի ուղղությամբ սկսեց գործողություններ, որոնք ուղղված էին հիմնական ջանքերի նախաշեմին հարավում ռուսական զորքերի կաշկանդմանը: Օրեխով-Տոկմակ ուղղությամբ հարձակումը սկսվեց հունիսի 3-ին, երբ աջակցող բրիգադները սկսեցին գործողություններ

իրականացնել հիմնական ուղղության թևերն ապահովելու համար: Ենթադրվում էր, որ հրետանային պատրաստությունն ու գրոհը կանցկացվեն հունիսի 3-ի լույս 4-ի գիշերը: Սակայն, այս սկզբնական փուլերում թույլ տրվեց մի քանի մարտավարական սխալներ: Նախ, հարձակմանը ներգրավված և ռազմաճակատը պահող զորքերի միջև առկա կոնֆլիկտների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները անբավարար էին: Դա հանգեցրեց է յուրայինների ուղղությամբ կրակելու և խափանումների մի քանի միջադեպերի: Երկրորդ, վերը նշված խափանումները նախնական հրթիռահրետանային խոցման և գրոհի սկսման ժամանակը երեք ժամով հետաձգեց, ինչի արդյունքում հիմնական ջանքերը գործադրվեցին լուսաբացից հետո: Այս սխալները արտացոլում էին մարզումների ժամանակ բրիգադի մակարդակում անձնակազմի գործողությունների անբավարար ներդաշնակեցումը:

9-րդ կորպուսի 47-րդ, 65-րդ և 33-րդ բրիգադների գումարտակները անցան հարձակման՝ մեքենայացված վաշտերի ուժերով ճեղքման մի քանի փորձերով: Ականապատ դաշտերում անցումներ ստեղծելու համար օգտագործվեց MICLIC և УР-77 «Метеорит» հեռահար ականազերծման համակարգերը, սակայն դրանք հաճախ անբավարար խորություն էին ապահովում ամբողջական ճեղքումն ապահովելու համար, իսկ դրանց թիկունքում շարժվող տրանսպորտային միջոցների անփորձ անձնակազմերը շեղվում էին մաքրված ուղուց: Այդ ժամանակ խնդիր դարձավ ականազերծման սարքավորումների պակասը: Կորպուսի տրամադրության տակ կար ականազերծման 10 մեքենա, հիմնականում՝ Vincent-1, որոնք կարող էին ականազերծել տեղանքը, բայց երկարատև աշխատանքից հետո շարժիչի գերտաքացումը նրանց շարքից դուրս հանեց: Ռուսական ստորաբաժանումները ականազերծման միջոցների դեմ պայքարում էին ՀՏԿՀ-ներով և հետևակի դիրքերի բարձունքներում տեղակայված տանկերի կրակով: Բացի այդ, ականազերծող տրալների պակասը, որպես կանոն, նշանակում էր, որ յուրաքանչյուր ճեղքման հատվածում միայն գլխամասային մեքենան ուներ ականազերծման սարքավորում: Ուկրաինական հրետանին չուներ բավականաչափ ծխածածկող արկեր՝ իր առաջխաղացման ուղիները քողարկելու համար:

Արդյունքում, վաշտի ուժերով կազմակերպված մի քանի գրոհները նույն ճակատագրին արժանացան: Երբ նրանք թափանցում էին ճեղքման նեղ գոտիներ, գլխամասային մեքենան անմիջապես կամ շարքից դուրս էր բերվում, կամ անշարժացվում էր: Ականազերծված գոտին չափազանց նեղ էր տրանսպորտային միջոցների ծավալման համար, այնպես որ, երբ հաջորդ տրանսպորտային միջոցը փորձում էր շրջանցել գլխամասային մեքենային՝ ամինջապես պայթում էր: Դա հանգեցրեց անշարժացած ուկրաինական զրահատեխնիկայի խոշոր կուտակումների առաջացմանը, որոնք այնուհետև թիրախ դարձան ռուսական հրետանու համար:

Չնայած այն հանգամանքին, որ զրահատեխնիկայի սկզբնական հարձակումը թուլացել էր, ռուսների առաջապահ պաշտպանական դիրքերն առանձնապես համառ դիմադրությամբ չեն պաշտպանվել: Սկզբնական անհաջող գրոհներից հետո ուկրաինական զորքերը, ներգրավելով ավելի փորձառու ստորաբաժանումներ, մի քանի հարձակում ձեռնարկեցին հետիոտն կարգով, որոնք կարողացան ներթափանցել ռուսների առաջին մարտական դիրքեր: Ռուսական մտահղացման համաձայն, պաշտպանական դիրքերի առաջին գոտին ճեղքման գոտի էր, ուստի, մինչև ուկրաինական զորքերի ներթափանցումը, հարձակման առաջին երկու շաբաթվա ընթացքում լքեցին որոշ դիրքեր, որպեսզի հակագրոհեն նախքան հակառակորդը ժամանակ կունենար այնտեղ ամրանալ: Դա պատշաճ կերպով

կազմակերպված չէր, այդ իսկ պատճառով ռուսական զորքերը սկսեցին կորուստներ կրել ուկրաինական հրետանու կրակից։

Այդպիսի խառնաշփոթի երկու պատճառ կար։ Նախ, ռուսական հրետանու հեռահարությունն անբավարար էր արդյունավետ հակամարտկոցային կրակ վարելուն։ Երկրորդ, ուկրաինական քարոզչության արդյունքում որոշ ռուս զինվորներ համոզեցին, որ նրանք բախվելու են ՆԱՏՕ-ի ծանր տեխնիկայի հիմնական հարվածին։ Այնուամենայնիվ, քանի որ ուկրաինական մեքենայացված ստորաբաժանումները սկսեցին կորուստներ կրել, այդ մարտերի տեսագրությունները տարածվեցին ռուսական զորքերի շրջանում, և նրանց ինքնավստահությունը սկսեց վերականգնվել։

Առաջին գրոհների ժամանակ կրած կորուստներն սկսեցին ազդել դեռևս անկատար ուկրաինական ստորաբաժանումների բարոյահոգեբանական վիճակի վրա։ Ուկրաինական զորքերի վստահությունը ինչպես սեփական հագեցվածության, այնպես էլ պատրաստվածության նկատմամբ նվազեց, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ երկրորդ շարակարգը հիմնականում հագեցած էր ՀՄՄ-ներով, որոնց անձնակազմը զուրկ էր արևմտյան ՀՄՄ-ներին բնորոշ պաշտպանվածությունից։ Արդյունքում, հարձակումները շարունակելու համար ուկրաինական հրամանատարությունը մի քանի ոչ մեքենայացված օժանդակ բրիգադներից փորձառու զորքերին տեղափոխեց առաջնագիծ՝ կիրառելով գրոհային խմբերի մարտավարությունը։ Քանի որ այդ ստորաբաժանումները որպես արևմտյան ՍՈՏ-ի առաջնային ստացողներ չէին, նրանցից շատերը չունեին բավարար միջոցներ իրենց գրոհնրն ապահովելու համար։ Սա հանգեցրեց ստորաբաժանումների խառնմանը, երբ տանկերը կամ ականազերծման տեխնիկան փոխառվում էր մեկ բրիգադից՝ մյուս գրոհային խմբերին աջակցելու համար։ Արդյունքում, որոշ դեպքերում վաշտի հարձակումը հնարավոր էր իրականացնել երեք բրիգադներից հատկացրած ստորաբաժանումների ուղեկցմամբ։ Դա շատ խնդրահարույց էր։ Ուկրաինական բրիգադները, որոնք պատրաստվել էին հարձակման համար, նախկինում նույնպես չէին զբաղվել իրենց թևերը պաշտպանող բրիգադների հետ փոխգործակցությամբ։ Մարտական փորձ չունեցող և Արևմուտքում շատ կարճ դասընթացներ անցած այս զորքերի համար ուղղակի կրակի կառավարումը մեծ խնդիր էր, ուստի տարբեր բրիգադների խառը ստորաբաժանումների միջև յուրային կրակից խոցման բազմաթիվ դեպքեր գրանցվեցին։ Չնայած այս դժվարություններին՝ գրոհային ստորաբաժանումները, այնուամենայնիվ, որոշ չափով առաջ շարժվեցին դեպի ռուսական պաշտպանան բնագծերի խորքը։

Ուկրաինական զորքերի առաջխաղացման հետ մեկտեղ սկսեցին առաջանալ նոր խնդիրներ։ Նախ, հունիսի վերջին ռուսական զորքերը սկսեցին հակագրոհներ իրականացնել։ Սկզբում դա ներառում էր ուկրաինական զորքերի գրաված մարտական դիրքերը ոչնչացնելու նպատակով հասանելիության գոտուց դուրս տեղակայված նրանց հրետանու հարվածները։ Երկրորդ՝ ռուսական զորքերը դիրքերի գիշերային գրոհների համար սկսեցին կիրառել զրահատեխնիկայի աջակցությամբ հետիոտն հետևակ։ Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր ուկրաինական գումարտակ լավագույն դեպքում ուներ լիովին մարտունակ գրոհային երկու դասակ, կենսական նշանակություն ուներ, որ գրաված դիրքերում գրոհայիններին արագորեն փոխարինեին գծային հետևակայինները։ Ընդհանուր առմամբ, հերթափոխ անցկացնելու համար բավարար ուժեր չկար։ Ռուսական հակագրոհների տեմպը նշանակում էր նաև, որ զորքերն անհրաժեշտ էր համալրել։ Գիշերային ժամերին

ականապատ դաշտերի նեղ անցուղիներով համալրումը չափազանց վտանգավոր գործ էր, հատկապես հաշվի առնելով գիշերային տեսանելիության սարքերի սահմանափակ հասանելիությունը և ՌԴ զինուժի կողմից հեռահար ականապատման համակարգերի կիրառումը: Այսպիսով, ուկրաինական ստորաբաժանումները հաճախ ստիպված էին համալրել պաշարները ցերեկային ժամերին, երբ ռուսները ի վիճակի էին ոչնչացնել դրանք մատակարարման երթուղիներում՝ FPV-դրոններով և բլուրներին տեղակայված տանկերի ՀՏԿՀ հրթիռներով, գրոհային ավիացիայի՝ «Атака» և «Вихрь» կառավարվող հրթիռներով: Հաշվի առնելով ականազերծման տեխնիկայի բացարձակ պակասը, ականազերծումը հաճախ իրականացվում էր ձեռքով, ինչը և դանդաղ էր, և վտանգավոր: Ընդհանուր էֆեկտը արագաշարժության ցանկացած աճի խափանումն էր, այնպես որ ուկրաինական ստորաբաժանումները ստիպված էին անընդհատ գրոհել պատրաստված դիրքերը:

9-րդ կորպուսի ապահովման միջոցների կորուստը նշանակում էր, որ գրոհները շարունակելու համար այդ տեխնիկան պետք է համալրվեր 10-րդ կորպուսի հաշվին: Առանց այդ միջոցների և առանց հրամանատարության ու վերահսկողության՝ բարդ մարտական տարածքում լայնածավալ ճեղքման օպերացիա իրականացնելու նպատակով 10-րդ կորպուսի զորամասերն ու ստորաբաժանումները սկսեցին առանձին-առանձին տեղափոխվել ոչ միայն հիմնական առանցք, այլև արևելյան ուղղություն դեպի Բախմուտ և օժանդակ ուղղություն՝ Վելիկայա Նովոսելկա:

Ի վերջո, որոշ հատվածներում հետագա առաջխաղացման համար, ուկրաինական զորքերին հաջողվեց գրավել բավարար թվով դիրքեր: Այնուամենայնիվ, դա խիստ կանխատեսելի էր ռուսների համար, ուստի պաշտպանական միջոցները կարող էին կենտրոնացվել այդ հատվածներում: Ավելին, ենթադրյալ հարձակման առանցքի փոքր լայնության և ուկրաինական հրետանու վրա աշխատող հակառակորդի «Ланцет-3М»-ի մշտական սպառնալիքի պատճառով հնարավոր չէր հրետանին առաջ տանել: Սա նշանակում էր, որ համամասնորեն ավելի մեծ քանակությամբ ռուսական հրետանին կարող էր խոցել ուկրաինական զորքերի առաջապահ դիրքերը՝ թույլ չտալով ուկրաինական հակամարտկոցային կրակը հասցնել ռուսական հրանոթներին: Այսպիսով, հարձակման երկրորդ փուլում դիմադրությունն ավելի ու ավելի կատաղի դարձավ: Քանի որ առկա ականազերծման միջոցների մեծմասնությունն արդեն ոչնչացված էր, աճել էր ձեռքով իրականացվող անցուղիների բացման մասնաբաժինը: Դրանք իրականացնող ստորաբաժանումները հիմնականում չունեին ականազերծման կրովի միջոցներ: Բացի այդ ռուսական զորքերը հաճախ ծառերի հետևից կողային ծուղակներ կազմակերպելով և զրահատեխնիկայի ագրեսիվ հակագրոհներ իրականացնելով սկսեցին համառորեն պաշտպանել իրենց դիրքերը: Այս փուլում ուկրաինական զորքերը դիրքերը գրավում էին միայն հակագրոհների արդյունքում, սակայն դրանցում չէին հասցնում ամրապնդվել, ուստի հարձակումները ստիպված էին մի քանի անգամ կրկնել: Արդյունքում, հունիսի վերջին ուկրաինացի սպաները սկսեցին վախենալ, որ հակահարձակումը չի հասնի իր նպատակին և դադար տվեցին՝ քննարկելով, թե որտեղ և ինչպես օգտագործել լրացուցիչ ստորաբաժանումներ:

Սկզբնական պլանը նախատեսում էր, որ 9-րդ, 10-րդ և «Մարուն» կորպուսները առանձին մարտական միավորներ էին: Իրականում, 9-րդ կորպուսի ստորաբաժանումները ներգրավված էին առաջին գրոհներում, մինչդեռ 10-րդ կորպուսը մաս առ մաս էր մարտի մեջ մտցվում, ինչը բարդացնում էր ճեղքման ապահովման միջոցների կենտրոնացման անհրաժեշտությունը: Մինչև հուլիս

ուկրաինական հրամանատարությունը պետք է որոշեր ուղարկել «Մարուն»-ի ստորաբաժանումները հարավային ուղղությամբ հարձակումը շարունակելու համար, թե ոչ: Քաղաքական տեսանկյունից հարձակման դադարեցումն անընդունելի էր թվում: Վախը, որ այլ հնարավորություն չի լինի, և հույսը, որ ռուսների դիմադրությունը կթուլանա, եթե հարձակումը շարունակվի, հանգեցրին նրան, որ որոշվեց շարունակել առաջխաղացումը դեպի հարավ, բայց փոփոխված նպատակով՝ այն է, գրավել Տոկմակը: ՈՒԶՈՒ-ն, գիտակցելով, որ պաշտպանական բնագծերը ճեղքելու համար ճեղքման ուժերի կիրառումը կհյուծի նրանց, կրակային խոցման իրենց առաջնահերթությունները փոխեցին դեպի վնաս հասցնելուն ուղղված ռազմավարությանը:

Հարձակման ժամանակ հակառակորդի թիկունքին հարվածներ հասցնելու Ուկրաինայի արշավն արժանի է առանձին քննարկման: Հարձակման ընթացքում Ուկրաինա էր հասցվել ավելի քան 300 միավոր Storm Shadow և SCALP թևավոր հրթիռ, չնայած որ զանգվածային միաժամանակյա կիրառումը հնարավոր էր իրականացնել միայն դրանց համեմատաբար փոքր քանակով, այնուամենայնիվ, հարձակման ընթացքում ռուսական հրամանատարական կետերին և ՆՏԱ բազաներին հասցված հեռավոր հարվածների քանակը գործնականում չազդեցին ռազմական գործողությունների ընթացքի վրա: Արժե ուսումնասիրել նման արդյունքների պատճառը՝ հաշվի առնելով այն աստիճանը, որով ՆԱՏՕ-ի զինվորականները հույս ունեն, որ հարվածների ճշգրտությունն ու խորությունը կարող է փոխհատուցել սովորական հրետանու օգտագործումը: Նախ, բարձր ճշգրտության հարվածների արշավի առաջնահերթ խնդիրը ռուսական Սևծովյան նավատորմի ոչնչացումն ու Ղրիմի թերակղզու պաշտպանության թուլացումը էր: Առանց անձնակազմ նավերի օգտագործման հետ միասին բարձր ճշգրտության հեռահար հրթիռների հարվածները թուլացրին Ռուսաստանի վերահսկողությունը Սև ծովում: Դա ռազմավարական ազդեցություն ունեցավ՝ թույլ տալով Ուկրաինային վերսկսել արտահանումը իր նավահանգիստներից, ինչպես նաև պայմաններ ստեղծել Ղրիմը ծովից մեկուսացնելու համար, չնայած այդ ազդեցությունը նկատելի կլիներ միայն այն դեպքում, եթե Ղրիմից ցամաքային ուղիների արգելափակման սպառնալիք առաջանար: Այսպիսով, հեռահար հարվածների արշավը հաջող էր իր հիմնական նպատակին հասնելու համար, բայց ցամաքային օպերացիաներում ունեցած ձախողումները նշանակում էր, որ հաջողությունը օգտագործվել էր ոչ լիարժեք ծավալով:

Ցամաքային օպերացիային աջակցելու համար Storm Shadow-ի օգտագործմամբ հարվածներն ավելի նվազ հաջող էին: Ոչնչացվել էին մի քանի շտաբ, այդ թվում՝ Բերդյանսկում գտնվող 58-րդ համազորային բանակի պահեստային հրամանատարական կետը, ինչպես նաև հարվածներ էին հասցվել Ղրիմը միացնող սահմանային կամուրջներին: Սակայն, ընդհանուր առմամբ, այդ հարվածները չհասցրեցին վնասի կրիտիկական մակարդակի, որն ի զորու կլիներ խաթարել շտաբային կառավարման կամ նյութատեխնիկական ապահովման համակարգերը: Բացի այդ, հարվածներն, արդյունավետության տեսանկյունից, համաձայնեցված չէին ցամաքային գործողությունների հետ, ինչը կարող էր հանգեցնել տեմպի ճնշմանը և հակառակորդի թիկունքի խորքում ավերածությունների համադրմանը: Դա մասամբ պայմանավորված էր նրանով, որ ցամաքային գործողությունները պահանջում էին միաժամանակյա մեծաքանակ թիրախներ խոցում, քան ռազմածովային ուժերի դեմ ուղղված գործողությունները: Սևծովյան նավատորմին հասցված վնասը բացարձակ

էր: Վնասված հրամանատարական կետերն ու կամուրջները, ընդհակառակը, կարող էին փոխարինվել և վերանորոգվել:

Հարձակման սկզբում Ղրիմում հարվածային ԱԹՍ-ների գրոհների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջնային էր մեծ խորությամբ GMLRS հրթիռներով ռուսական շտաբային կառավարումն ու նյութատեխնիկական ապահովման համակարգերի աշխատանքի խաթարումը, ինչպես նաև հակաօդային պաշտպանության համակարգերի և այլ թիրախների խոցումը: Երբ օպերացիան սահմանափակվեց Տոկմակով, կրակի խոցման խորությունը նույնպես կրճատվեց՝ հարձակվողներին աջակցելու համար հատուկ ուշադրություն դարձվեց փոքր խորությամբ հարվածներին: Մասնավորապես, GMLRS ՀԿՌՀ-ների համար սկսեցին փոխվել առաջնահերթությունները՝ կարևոր թիրախներ ոչնչացնելուց նրանք անցան ռուսական հրետանու խոցմանը: Դա պայմանավորված էր նաև ուկրաինական հրետանին առաջ մղելու անկարողությամբ, քանի որ ճեղքման լայնքը բավարար չէր և խոցվում էին «Ланцет»-ներով: Չնայած օրական ընդամենը յոթ GMLRS հրթիռների օգտագործումով ռուսական բազում հրանոթների ոչնչացմանը, ռուսական զորքերը կարողացան «մարսել» այդ կորուստները կրիտիկական այն ժամանակաշրջանում, երբ Ուկրաինան դեռ ուներ հարձակողական մարտական ներուժ:

Ռուսական հակաքայլերն էլ իր հերթին ավելի նվազեցրին բարձր ճշգրտության հարվածների հետևանքները: Հարձակման մեկնարկման պահին զինամթերքը, որը պետք է ապահովեր բարձր ճշգրտության ազդեցություն, կիրառվել էր արդեն գրեթե մեկ տարի: Օրինակ, հակամարտության սկզբում Excalibur արկի արդյունավետությունը հասնում էր մոտ 70%-ի, իսկ 2023 թվականի օգոստոսին նշանակետերը խոցվում էին միայն 6%-ով, ինչը սովորական արկերի հետ համամատած ավելի ցածր էր: Դա տեղի էր ունեցել ՌԴ ԶՈՒ-ի կողմից կիրառվող ռադիոէլեկտրոնային պայքարի (ՌԷՊ) կատարելագործված միջոցների հակաքայլերի պատճառով: Ազդեցությունը GMLRS-ի վրա փոքր-ինչ տարբերվում էր:Առաջին խնդիրն այն էր, որ էլեկտրոնային պաշտպանական համակարգերը ի զորու էին շեղել ՀԿՌՀ-ի ուղղակի խոցման հնարավորությունը: Երկրորդը, որ ռուսական հակաօդային պաշտպանության միջոցները կարող էին խոցել դրանք: Այս խնդիրների լուծումը պայմանավորված էր բազմաշերտ ոչնչացման միջոցների կիրառմամբ: Այլ տեսակի զինամթերքի օգտագործումը, ինչպիսիք են հակաառադիոլոկացիոն HARM հրթիռները, ՌԷՊ միջոցները կամ կեղծ թիրախները, հնարավորություն կստեղծեին GMLRS-ի հարվածները առավել արդյունավետ դարձրելու: Սակայն այդ որոշիչ պահանջները զգալիորեն կնվազցնեին օպերատիվ առումով նշանակալի օբյեկտներին հարվածներ հասցնելու տեմպն ու ծավալը:

Հուլիսին սկսված «Մարուն» կորպուսի ստորաբաժանումների տեղաշարժը զգալի ճնշում գործադրեց 58-րդ համազորային բանակի վրա: Սահմանափակ քանակությամբ Storm Shadow-ի միջոցով խորը թիկունքին հասցված հարվածները, ինչպես նաև GMLRS-ի միջոցով հրետանային համակարգերի ոչնչացումը և այն փաստը, որ ռուսական զորքերը առաջնագծում երկու ամիս շարունակ ծանր մարտեր էին վարել, ուկրաինական ստորաբաժանումները հնարավորություն ունեցան արդյունքների հասնել փոքր մարտավարական գործողություններում՝ հիմնականում հարձակման ճակատը 30 կմ-ից մինչև 10 կմ նեղացնելու շնորհիվ: Օրինակ՝ մեկ միջադեպի ժամանակ ուկրաինական 15 հոգանոց գրոհային խումբը հարկադրեց 88 ռուս զինծառայողներին լքել իրենց դիրքերը: Չնայած նման միջադեպերին, հարձակման տեմպերը չափազանց դանդաղ էին և միշտ ժամանակ էին տալիս

ռուսներին վերականգնել իրենց պաշտպանությունը, այնպես որ յուրաքանչյուր հարձակում վերածվում էր ամրաշինությունների մոտալուտ գրոհին: Առաջխաղացումների ընթացքում յուրաքանչյուրի թևերն ապահովելու անհրաժեշտությունն էլ ավելի էր դանդաղեցնում տեմպը: Բացի այդ, ուկրաինական զորքերի հարձակումը սկսեց ընթանալ 7 կմ լայնությամբ հատվածում՝ երկու բարձունքների ուղղությամբ: Սա զորքերը թևերից հրետակոծման խոցման սպառնալիք դարձավ, ինչը և հետագայում սահմանափակեց առաջխաղացման տեմպերը: «Մարուն» կորպուսի գործարկումը, որպես ճեղքումն զարգացնելու ուժ, վերացրեց ռուսների համար ցանկացած ռիսկ, ըստ որի հետագայում ուկրաինացի-ները կկարողանան առաջնային ընտրել այլ ուղղություն: Դա թույլ տվեց ռուսական զորքերին իրականացնել 58-րդ համազորային բանակի առավել տուժած ստորա-բաժանումների հերթափոխ, այնպես որ ուկրաինական զորքերը ստիպված էին պայքարել թարմ ուժերի դեմ:

Համառ քննարկումներ ընթացան հարավում ուժերը կենտրոնացնելու փոխարեն, հարձակման համար պատրաստված զորքերի մի մասը Բախմուտի ուղղությամբ ուղարկելու Ուկրաինայի որոշման շուրջ : Սա որոշ չափով սխալ ձևակերպում է ՈՒԶՈՒ-ի առջև դրված ընտրության հարցի վերաբերյալ: Արևելյան ուղղությանը զինամթերքի հատկացումը, անշուշտ, նպաստեց հարավային ուղղությունում անբավարար կրակային աջակցության: Այդուհանդերձ, քանի որ ուկրաինական հրետանու առաջխաղացումը զսպվում էր ռուսական ականներով և «Ланцет»-ներով, հարավային առանցքին մեծաքանակ հրետանային միջոցներ տրամադրելը չէր հանգեցնի Ուկրաինայի կրակային հզորության ակնհայտ աճին՝ այնտեղ, որտեղ դա կարևոր էր: Նույնը կարելի է ասել ավելի շատ զորքեր կիրառելու մասին: Հաշվի առնելով ճակատներում ներգրավվածության ծավալները, ավելի շատ հարձակողական ջոկատներ հարավ տեղափոխելը չէր հանգեցնի իրականացվելիք օպերացիաների ծավալի զգալի աճի, և, հետևաբար, կիրառվող մարտական ուժի ավելացմանը: Այնուամենայնիվ, երբ պարզ դարձավ, որ հարավային ուղղությամբ լավագույն դեպքում կարելի է հասնել Տոկմակին (և նույնիսկ այդ նպատակը հարցականի տակ էր), ակնհայտ էր, որ առաջընթաց ցույց տալու համար առկա էր ուժեղ քաղաքական ճնշում, այնպես որ ավելի շատ զորքերը ուղղվեցին դեպի Բախմուտ: Սակայն, առանց բավարար մեքենայացված ուժերի, այդ հարձակումները չէին կարող հասնել այնպիսի արագաշարժության, որ բավարարեր ռուսական զորքերը շրջապատելու համար: Արևելյան ուղղությամբ սկսվեցին անտառագոտի-ների համար մղվող մարտեր: Այսպիսով, իրական փոխզիջումային լուծումը ոչ թե մեկ առանցքով կամ երկու ուղղություններով ստորաբաժանումների բաշխման միջև ընտրությունն էր, այլ այն, թե արդյոք պետք է կիրառել այդ ռեզերվները, կամ դրանք պահպանել: Հետադարձ հայացք նետելով կարելի է ասել, որ այդ ուժերի գործարկումը սխալ էր, քանի որ Ուկրաինայում այժմ պակասում են ներդաշնակեցված ստորաբաժանումները:

Հարձակման ընթացքում ռուսների ուժերի հյուծումը հնարավոր էր գագաթնա-կետին հասցնել օգոստոսի սկզբին: Հակագրոհները և Ուկրաինային բարելավված սովորական երկակի նշանակության զինամթերքի (DPICM) մատակարարումը, ինչը մեծացրեց ինչպես օրվա ընթաղքում արձակվող կրակոցների քանակը, այնպես էլ հզորությունը, հանգեցրեց ռուսների կորուստների աճին: Այնուամենայնիվ, Ռուսաստանը շարունակում էր իր դիվիզիաների կազմումը և թարմ ուժերով պաշտպանությունն ապահովելու գնդերի հերթափոխը: Եթե դեպի Տոկմակ

առաջխաղացումը պետք է կայանար, ապա, ամենայն հավանականությամբ, դա պետք է տեղի ունենար օգոստոսի սկզբին: Դրանից հետո հավանականությունը նվազելու էր, քանի որ հարձակողական գործողություններին աջակցելու համար ուկրաինական արկերի օրական սպառման պաշարները կարող էին պահպանվել ամենաուշը մինչև հոկտեմբեր: Սեպտեմբերի կեսերին հարձակողական գործողությունները հիմնականում ուղղված էին մարտավարական դիրքերի բարելավմանը, քանզի հրամանատարները հասկացան, որ առաջխաղացումը, անգամ դեպի Տոկմակ տեղի չի ունենալու:

Հնարավոր է, որ հարձակումը հասել էր իր գագաթնակետին, բայց ևս մեկ փորձ արվեց անցնել Դնեպրը և հարձակվել Կրինկիի հատվածում: Այդ նպատակով պատրաստվեց մոտ 55 GMLRS, ինչպես նաև մեծ թվով այլ խոցման միջոցներ: Գործողությունն իրականացնող ուկրաինական ծովային հետևակայինները գրոհում էին իրենց վաղեմի զորավարժարանների տարածքում և լավ գիտեին տեղանքը: Հույս կար, որ գետի վրայով ուժերի տեղափոխումը կարող է վերածվել թևից հարվածի: Երբ անցումն իրականացվեց, ուկրաինական զորքերին հաջողվեց հենակետ ձեռք բերել արևելյան ափին, և մոտ երեք օրվա ընթացքում հնարավորություն կար զգալի քանակությամբ զորքեր տեղափոխել: Սակայն ուկրաինացիները այդ հնարավորությունից չօգտվեցին: Պատճառը պարզ էր. չնայած մեծ թվով զորքեր տեղափոխելու հնարավորությանը, դրանց ապահովման խնդիրները հնարավոր չէր լուծել, որքան մեծ լինեին ուժերը, այնքան պակաս կենսունակ կլիներ դրանց ապահովումը: Կռինկիի գործողությունը մանրամասն նկարագրության կարիք չունի, քանի որ այն երբեք ամբողջությամբ չի իրականացվել, բայց այն տալիս է մեկ օգտակար դաս, որին պետք է ուշադրություն դարձնել: Արդի միջավայրում մարտի վարման պայմանները՝ լայն ճահճային տարածքներում անցումներ ստեղծելը, մշտական դիտարկումից և կրակի անորոշ սպառնալիքից պաշտպանությունը խնդիր է, որը դեռ դոկտրինալ պատասխան չունի: Հաշվի առնելով Արևելյան Եվրոպայում այդպիսի անցումների քանակը, այն վերածվում է ուսումնասիրության արժանի խնդիրների համալիրի:

Գ. Ձախողման պատճառների գնահատում

Վերլուծաբանների մեծամասնությունը հակված էր այն եզրակացության, որ 2022 թվականին ռուսական գործողությունների ձախողման և 2023 թվականին նրանց համեմատական հաջողության տարբերության պատճառներն այն են, որ ռուսները սովորում և հարմարվում են ստեղծված իրավիճակին, ինչպես նաև մարտավարական առումով ավելի հմուտ են դառնում: Չնայած Ռուսաստանը հարմարեցրել էր իր մարտավարությունը, այնուամենայնիվ ռուսական գործողությունների արդյունավետության զարմանալի տարբերության հիմնական պատճառն այն է, որ Ուկրաինա ներխուժման նախապատրաստման ժամանակ Կրեմլի հիմնական ջանքերը կենտրոնացած էին հատուկ ծառայությունների վրա, որոնք պետք է ապակայունացնեին Ուկրաինան և կազմալուծեին նրա պետական ու ռազմական կառավարման համակարգերը: Ենթադրվում էր, որ ռազմական ներխուժումը լուրջ կազմակերպված դիմադրության չի հանդիպի, բացառությամբ Դոնբասի: Կիևի, Խարկովի և Խերսոնի համար մղված մարտերում Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի կրած պարտությունները հիմնականում ներխուժման պլանավորման սկզբնական փուլի սխալ հաշվարկի և սովորական մարտական գործողությունների

համար ոչ ճիշտ կառուցվածքային և կառավարվող ուժերի օգտագործման հետևանք էին: Նախնական պետական հեղաշրջման ձախողումից հետո փորձեր արվեցին շտկել կառուցվածքային թերությունները, բայց առանց թվաքանակի ավելացման, և պատերազմի սկզբում մեծաքանակ կորուստների պատճառով ռուս զինվորականները չկարողացան հասնել իրենց նպատակին: 2023 թվականին Ուկրաինան գործ ուներ այնպիսի թշնամու հետ, որն ամբողջությամբ փոխեց իր ռազմավարությունը: Ռուսաստանը սկսեց լրջորեն վերաբերվել ռազմական օպերացիաների պլանավորմանն ու անցկացմանը՝ կայծակնային պատերազմի ռազմավարությունից անցնելով երկարատև պատերազմի՝ դրա համար մոբիլիզացնելով մարդկային և արդյունաբերական անհրաժեշտ ռեսուրսներ: Նրա հիմական խաղադրույքն այն էր, որ արևմտյան գործընկերները կձանձրանան Ուկրաինային աջակցելուց, ինչը թույլ կտա Ռուսաստանին, ի վերջո, ձեռք բերել անհրաժեշտ առավելություն մարտի դաշտում:

2022 թվականին ՌԴ ԶՈՒ օպերատիվ ձախողումների հիմնական պատճառը մի քանի անկախ առանցքներով արդյունավետ օպերացիաներ իրականացնելու համար ցամաքային ուժերի անբավարար քանակությունն էր: Իրականում, հաջող լայնածավալ ներխուժման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների բացակայությունը հիմնական պատճառներից մեկն էր, որ շատ վերլուծաբաններ, այդ թվում՝ ուկրաինական հետախուզական ծառայություններում, թերահավատորեն վերաբերվեցին 2022 թվականի փետրվարին ռուսական ներխուժման հավանականությանը, կանխատեսելով այդպիսի ներխուժումը ավելի ուշ՝ 2022 թվականի հունիսին կամ նույնիսկ սեպտեմբերին, և միայն հարավում և արևելքում ռազմական գործողությունների սահմանափակ թատերաբեմում: Հաջող ներխուժման հավանականության այդպիսի թերահավատությունը ռուսներին թույլ տվեց հասնել օպերատիվ հանկարծակիության, ինչը բացատրում է Ուկրաինայի հարավը գրավելու հաջողությունը, ինչպես նաև խորը առաջխաղացումը հյուսիսում, որտեղ Ուկրաինայի զինված ուժերը զգալի ուժեր չունեին: Ռուսների պլանը շատ ավելի մոտ էր հաջողությանը, բայց երբ արագության խաղադրույքը ձախողվեց, պլանը չեղարկվեց:

Սկզբնական կայծակնային պատերազմի ընթացքում Ուկրաինայի զինված ուժերին հաղթելու անկարողությունը, մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ կորուստները հանգեցրին նրան, որ Ռուսաստանը բախվեց զորքերի սուր պակասի խնդրին, որն անհրաժեշտ էր ոչ միայն հարձակումը շարունակելու, այլ նաև, հատկապես հարավում և արևելքում, տարածքները պահելու համար: Բավարար քանակի անձնակազմի բացակայությունն էր, որ ստիպեց ռուսներին նահանջել Կիևից, Չերնիգովից, Սումիից և թույլ չտվեց նրանց կազմակերպել համապատասխան պաշտպանական խտություն Խարկովի մերձակայքում, ինչը հնարավորություն տվեց Ուկրաինայի զինված ուժերին հաջող ճեղքում իրականացնել և զարգացել հետագա հարձակումը մինչև Լուգանսկի շրջանի սահմանները: Ռուսական մատակարարման գծերի նկատմամբ ուկրաինական կրակային վերահսկողությունը բացատրում է Խերսոնից ռուսական զորքերը դուրս բերելու մարտավարական որոշումը, այնտեղ տեղակայված զորքերը կորցնելու ՌԴ ԶՈՒ դժկամությունը արտացոլում էր ռազմաճակատի այլ հատվածներում անձնակազմի պակասը:

Ինչպես նախորդ ռազմական հակամարտություններում, ներառյալ առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, պատերազմի առաջին փուլի ավարտից հետո, որը բնութագրվում էր առաջին շարակարգի արագ մանևրմամբ, սկսվեց

երկրորդ փուլը, որի ընթացքում շփման գիծը կայունացավ, մարտական գործողությունները ձեռք բերեցին դիրքային բնույթ, և կողմերը կենտրոնացան պատերազմում հաղթելու համար պահուստներ ստեղծելու վրա: 2022 թվականի հոկտեմբերին սկսված զորահավաքի արդյունքում Ռուսաստանին հաջողվեց մինչև 2023 թվականի մայիս ոչ միայն լրացնել իր կորուստները, այլև ավելացնել Ուկրաինայում զորքերի խմբավորման թիվը հասցնելով այն 420 000-ի (չհաշված «Ռոսգվարդիայի» և ոստիկանության ստորաբաժանումները), ինչպես նաև ռազմական կարիքները հոգալու համար անհրաժեշտ ծավալներով կարգավորել զենքի և ռազմական տեխնիկայի արտադրություն: Արդյունքում, Ուկրաինական հարձակումը, որը սկսվել էր 2023 թվականի հունիսին, իրականացվում էր այնպիսի պայմաններում, որոնք զգալիորեն տարբերվում էին հարձակման պլանի մշակման ժամանակ գերակշռող պայմաններից:

2022 թվականի աշնանը Ուկրաինայի Զինված ուժերը բաղկացած էին 130 գումարտակային մարտավարական խմբերից, 1-ին և 2-րդ բանակային կորպուսի առանձին ստորաբաժանումներից, որոնց ընդհանուր թիվքանակը կազմում էր մոտ 200,000 զինվոր և սպա, մոտ 930 տանկ, ավելի քան 2500 մարտական զրահապատ մեքենաներ, 1350 հրետանային համակարգեր, 660 ՀԶԿՌՀ և 40 օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիրներ (ՕՄՀՀ): 2023 թվականի հունիսի սկզբին ռուսական ցամաքային զորքերը Ուկրաինայի տարածքում կազմում էր մոտ 420,000 զինծառայող, 1980 տանկ, 4450 մարտական զրահապատ մեքենա, 2750 հրետանային համակարգ, 860 ՀԶԿՌՀ և 46 ՕՄՀՀ: Այս ընթացքում ՌԴ ԶՈՒ-ն հրաժարվեց գումարտակային մարտավարական խմբերի կիրառումից և անցավ բանակային կառավարման համակարգին՝ միավորելով 50 բրիգադ, 128 գնդեր, 102 առանձին գումարտակներ և մոտ 50 համախմբված ստորաբաժանումներ:

Կարևոր է նշել, որ Ուկրաինայում ռուսական զորքերի խմբավորումը, որի մասին խոսվել է վերևում, ներկայանում էր նրա մարտական ստորաբաժանումները: Այս զորքերը պատասխանատու չէին Ռուսաստանի սահմանի պաշտպանության համար: Այդ խնդիրներն իրականացնում էին ՌԴ ԶՈՒ այլ ստորաբաժանումներ: Վերջիններս շահագրգռված չէին օկուպացիոն ռեժիմի իրականացմամբ: Դրա համար Ռուսաստանի Դաշնությունը Ուկրաինայում տեղակայել էր Ռոսգվարդիայի 25,000 զինծառայող, որոնք սպառազինված էին 520 մարտական զրահապատ մեքենաներով, 140 հրետանային համակարգերով և 22 ուղղաթիռներով: Ի հակադրություն, Ուկրաինայի զինված ուժերը պետք է պահպանեին ամբողջ ուկրաինական սահմանը՝ ընդլայնելով ռեսուրսները, մինչդեռ ՌԴ ԶՈՒ-ն պահպանում էր որոշակի ուղղություններում ռեսուրսներ տեղակայելու ազատությունը: Ռուս–ուկրաինական սահմանին ՈՒԶՈՒ-ի ստորաբաժանումների առկայությունը, ՀԶԿՌՀ-ներից, հրետանուց, ականանետերից ուկրաինական տարածքի մշտական գնդակոծումը, օդային հարվածները և դիվերսիոն խմբերի կիրառումը ստիպեցին Ուկրաինային զորքերի մի մասը պահել հյուսիսում, ինչը անհնարին դարձրեց նրանց տեղափոխումը այլ ուղղություններ: Ուկրաինայի զինված ուժերի ևս 50,000 զինծառայողներ աջակցության շարակարգով ներգրավված էին հակաօդային պաշտպանության շարժական խմբերում, որն անհրաժեշտ էր Ուկրաինայի ամբողջ տարածքում ռուսական հեռահար հարվածները խափանելու համար:

Ռազմաճակատի մեծ մասում զորքերի սահմանափակ խտությունը փոխհատուցելու համար հրետանու կիրառման անհրաժեշտությունը սահմանափակեց հիմնական ուղղությամբ կրակային հզորության կենտրոնացումը:

Օրեխով–Տոկմակ ուղղությամբ միաժամանակ գործող 155 մմ տրամաչափի հրանոթների ամենամեծ թիվը եղել է 55 միավոր: Ուկրաինական հրետանու զինամթերքի քանակը հարձակման ամբողջ ընթացքում եղել է տարբեր՝ առավելագույնը հասնելով օրական մեկ հրանոթի համար 70 արկի: Սակայն, զինամթերքի մատակարարումը անհամաչափ էր՝ մերթ ավելանում էր, մերթ նվազում, այնպես որ հարձակման որոշ ժամանակահատվածներում ուկրաինացի հրետանավորները օրական մեկ հրանոթի համար ընդամենը 10 կրակոցի հնարավորություն ունեին:

Ինչպես հարձակողական գործողությունների սկզբում, այնպես էլ ընթացքում Ուկրաինայի զինված ուժերը հակառակորդի նկատմամբ թվային առավելություն չուներ անձնակազմի, մարտական համակարգերի և զինամթերքի քանակի, հաջող հարձակողական գործողությունների համար անհրաժեշտ ապահովման միջոցների, հատկապես լավ կազմակերպված և շարակարգված պաշտպանական բնագծերի դեմ պայքարի առումով: Երբեմն Ուկրաինայի զինված ուժերին հաջողվում էր հասնել տեղական գերազանցության, բայց դա հազվադեպ էր պահպանվում, քանի որ զորքերը առաջ էին շարժվում: Շատ դեպքերում ուժերի հարաբերակցությունը հօգուտ Ուկրաինայի չէր, ինչը ստիպում էր ուկրաինական ստորաբաժանումներին գրոհել ավելի մեծաքանակ հակառակորդի դիրքերը: Պայմանները հատկապես անբարենպաստ էին՝ հաշվի առնելով օդային աջակցության բացակայությունը: Այս ֆոնի վրա Ուկրաինան ուներ որոշ որակական առավելություններ ինչպես զորքերում, այնպես էլ տեխնիկայում, բայց դա բավարար առավելություն չապահովեց:

Չնայած թվային առավելության բացակայությանը, Ուկրաինայի զինված ուժերը հուսադրված էին բարոյական առավելությամբ՝ պայմանավորված ուկրաինական զորքերի մոտիվացիայի բարձր մակարդակով և ռուսական զորքերի ցածր բարոյահոգեբանական վիճակով, որը նկատվել էր նրանց ձմեռային հարձակման ժամանակ: Ինչ-որ չափով Ուկրաինան կրկնեց այն սխալը, որը Ռուսաստանը թույլ էր տվել պատերազմի առաջին փուլում՝ հույս ունենալով հարձակողական գործողություններով շոկ առաջացնել, որն իր հերթին պետք է թույլ չտար հակառակորդին համարժեք դիմադրություն ցուցաբերելուն: Հաջողության այս տեսությունը պլանավորման մեջ անհաջող ենթադրություն էր:

Այսպիսով, օպերատիվ մակարդակում Ուկրաինական հարձակումը ձախողվեց այն պատճառով, որ պլանը պատշաճ կերպով համաձայնեցված չէր առկա ռեսուրսների հետ: Բացի այդ, համապատասխան զորքեր չեն հատկացվել այն առաջադրանքների կատարման համար, որոնց պետք է պատրաստվեին: Անպատրաստի անձնակազմը գտնվում էր հարձակման կիզակետում, մինչդեռ փորձառու զորքերն իրականացնում էին շեղող մանևր կամ ընդգրկված էին դիրքերի ամրպնդման գործընթացում: Ուկրաինայի միջազգային գործընկերները չկարողացան մոբիլիզացնել արդյունաբերությունը հակամարտության սկզբնական փուլում, մինչդեռ ուկրաինացի պլանավորողների չափազանց լավատեսական ենթադրությունները, որոնք հիմնված էին Ռուսաստանի մոբիլիզացիայից առաջ գոյություն ունեցող պայմանների վրա, լուրջ հետևանքներ ունեցան: Այս կետը մենք շեշտադրում ենք այն պատճառով, որ Ուկրաինայի միջազգային գործընկերները բաց են թողել արդյունաբերությունը մոբիլիզացնելու մասին որոշում կայացնելու պահը, մինչդեռ Ուկրաինան բաց էր թողել իր անձնակազմը մոբիլիզացնելու և պատշաճ կերպով պատրաստելու որոշման կետը: Հետևաբար, ապագա օպերացիաների համար կենսականորեն կարևոր էր, որպեսզի Ուկրաինան և նրա գործընկերները

չափոփվեին այն հույսով, որ բավարար ռեսուրսներով չապահովված օպերացիան հաջողության մեծ հավանականություն ունի:

Բացի այս կարևորագույն օպերատիվ կետից, կարելի է երևան բերել ուկրաինական հարձակման նախապատրաստման բազմաթիվ այլ թերություններ:

Հանկարծակիության բացակայություն

Ուկրաինական հարձակման ժամանակ հաջողություն ապահովված ակնկալվող մեխանիզմներից մեկը ռուսական զորքերի համար շոկ էր: Նախնական պլանի համաձայն, ենթադրվում էր, որ դա թույլ կտա 12 բրիգադներին 30 կիլոմետրանոց ճակատում ջախջախել թշնամու վեց գնդեր: Ավելի ուշ պլանավորողները հասկացան, որ դա հնարավոր չէ՝ նրանք հույս ունեին, որ առաջին հարձակման դաժանությունը կստիպի պաշտպաններին նահանջել: Այնտեղ, որտեղ պատերազմի ընթացքում մարտավարական հանկարծակիություն էր ձեռք բերվում, օրինակ, 2022 թվականին Խարկովի հարձակման ժամանակ, ուկրաինական զորքերը արդյունավետորեն դուրս էին մղում ռուսական ուժերին: Եվ հակառակը, ինչպես Խերսոնում, այնպես էլ Օրեխով –Տոկմակի առանցքում հանկարծակիության խափանման պատճառով օպերատիվ անվտանգությունը ձախողվեց: Խերսոնի ուղղությամբ Ուկրաինայի կառավարությունը ազդարարեց տվյալ առանցքում հարձակման անցնելու մտադրության մասին: Այսպիսով, Խերսոնի վրա հարձակվելու հետագա որոշումը կայացվեց արդեն պատրաստված պաշտպանության պայմաններում և առանձնապես հաջող չէր ցամաքային հարձակումների առումով, որը ոչ էլ ցնցեց ռուսական ուժերին:

Օրեխով–Տոկմակի առանցքում օպերատիվ անվտանգության համակարգի խափանումը տեղի է ունեցավ մի քանի մակարդակներում: Ռազմավարական մակարդակում Ուկրաինայի միջազգային գործընկերներից հույժ գաղտնի տեղեկատվության արտահոսք տեղի ունեցավ (ներառյալ տեղանքի ռելիեֆի վերլուծություն և այլ նյութեր), ինչը ռուսներին ճշգրիտ պատկերացում տվեց ուկրաինական գրոհային խմբավորումների կառուցվածքի, ենթադրյալ հնարավորությունների, սահմանափակումների և հարձակման ուղղությունների տարբերակների մասին: Ավելին, ուկրաինական կառավարության հրապարակային հայտարարությունները և գործընկերների հրապարակային ելույթները Ռուսաստանին հստակ պատկերացում տվեցին հավանական հարձակման ժամկետների մասին և հիմնավորեցին ՌԴ ԶՈՒ գործողությունների պլանավորումը: Վերջապես, ռուսական ներթափանցումը Ուկրաինական կոմունիկացիոն համակարգեր թույլ տվեց ձեռք բերել մի շարք նյութեր: Արդյունքն այն էր, որ երբ հարձակումը սկսվեց, ուկրաինական հրամանատարության կողմից պլանավորումը մասերի բաժանելու ջանքերը հանգեցրեցին զորքերի իրավիճակի ավելի վատ ընկալմանը, քան ռուս հրամանատարներն այն ըմբռնեցին: Դասն ակնհայտ էր. ապագա գործողությունները պետք է ուղեկցվեին համապատասխան ապատեղեկատվությամբ և ավելի արդյունավետ օպերատիվ անվտանգությամբ: Ուկրաինայի համար դա նշանակում էր մտադրությունների մասին ավելի քիչ հրապարակային ծանուցում: Ուկրաինայի գործընկերները նույնպես կարող են դասեր քաղել հավաքական պլանավորման վերաբերյալ նրա քաղաքական դիսկուրսի թափանցիկությունից:

Ուժերի անբավարար մոբիլիզացիա

Հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության մարդկային մեծ պաշարները՝ Ուկրաինան պետք է ձգտեր իր զինված ուժերի որակական գերազանցությանը հասնելուն: Այն իրավիճակում, երբ ՈՒԶՈՒ-ն պաշտպանվում էր, դա նշանակալիորեն ձեռք էր բերվել: Ինչ վերաբերում է հարձակողական գործողություններին, ապա 2023 թվականը ցույց տվեց, որ բարձր տեմպերով գործողություններ իրականացնելու համար ուժերի պատրաստման և ձևավորման համակարգը չի ապահովում զորքերի բավարար որակ: Դրա համար առկա են մի քանի պատճառներ: Ամենահիմնական մակարդակում ոչ երկարատևության և ոչ էլ բովանդակային առումներով նախապատրաստումը չէր համապատասխանում պահանջներին: Ուկրաինայի զինված ուժերի և ՆԱՏՕ-ի երկրների մարտական պատրաստության իրականացման մոտեցումները տարբեր են: Այնուամենայնիվ, BATSIM-ի (մարտադաշտի սիմուլյատոր) և վերապատրաստվողներին հրետանու շոշափելի ազդեցությանը վարժեցնելու այլ մեթոդների սահմանափակ օգտագործումը հանգեցրեց նարան, որ որոշ ստորաբաժանումներ վատ գործեցին հարձակման սկզբում: Օրինակ՝ հրետանու ծանոթության և հրետանավորների ոչ բավարար պատրաստվածության պատճառով զինծառայողները չէին ցանկանում պահպանել առաջխաղացման տեմպը մոտակա կրակային պատնեշի հետևում:

Մյուս հիմնարար խնդիրն այն հմտություններն էին, որոնք զարգացել էին խստավարժեցման միջոցով: Interflex օպերացիայի ընթացքում իրականացվել էր հինգշաբաթյա ուսուցում և, հնարավոր է, մեկ ամիս համատեղ ուսուցում, այսինքն՝ մինչև մարտական գործողությունների սկսվելը զորքերը չունեին մշակված մարտական շարժումների հավաքածու, ինչը կարող էին կատարել անհրաժեշտ տեմպով: Ուղիղ նշանառությամբ կրակ վարելու մարտավարական վերահսկողությունը նույնպես բավականին սահմանափակ էր, մասամբ այն պատճառով, որ մարզման ընթացքում անվտանգության սահմանափակումների, ինչպես նաև ամուր հիմքեր ստեղծելու համար բավարար ժամանակ չկար, դասակի և վաշտի մակարդակի կրակն ու շարժումները պատշաճ կերպով մշակված չէին: Որպես հետեւանք, կրակային կարգապահությունը հիմնականում անբավարար էր:

Զորքերի որակի հետ կապված այս խնդիրը լուծելու համար ուկրաինացի զինվորականների որդեգրած մեթոդը եղել է իրենց ստորաբաժանումներից գրոհային ջոկատների անձնակազմ ընտրելը, որպեսզի գումարտակը բաղկացած լիներ երկու գրոհային դասակներից, իսկ գումարտակի մնացած մասը՝ սովորական վաշտերց: Գործնականում դա նշանակում էր, որ հարձակման տեմպը պահպանելու համար միմյանց մարտակարգերով հերթափոխով անցնելու ունակություն ունենալու փոխարեն, յուրաքանչյուր հարձակում պետք էր մանրակրկիտ պլանավորվեր և ավարտին հասցվեր: Բացի այդ, այս հարձակողական ստորաբաժանումների կորուստը կթուլացներ գումարտակի հարձակողական մարտական հզորությունը: Դա հրամանատարներին ստիպեց զգուշություն ցուցաբերել, ինչն էլ ավելի նվազեցրեց տեմպը: Թեև Ուկրաինայի զինված ուժերի որդեգրած մոտեցումն իմաստ ուներ առկա սահմանափակ ժամանակի պայմաններում, նախապատրաստման համար ժամանակը բավարար չէր:

Մեկ այլ խնդիր էր բրիգադների պատրաստումը որպես միասնական կազմավորում: Քանի որ բրիգադի շտաբների մեծ մասը ուղարկվել էր առաջնագիծ՝ պաշտպանական ոլորտները կառավարելու համար, Ուկրաինայի համար դժվար էր

բրիգադի շտաբին կից բրիգադներ կամ գումարտակներ պատրաստել: Արդյունքում, երբ ուկրաինական ստորաբաժանումները հասան մարտական գործողությունների շրջան, նրանք, որպես կանոն, պլանավորեցին և իրականացրին առանձին վաշտերի գործողություններ բրիգադի շտաբի ղեկավարությամբ և կրակային միջոցների աջակցությամբ, այլ ոչ թե բրիգադային մանների ուրվագծի համաձայն:

Ռազմական գործողությունները պլանավորելիս անհրաժեշտ էր հաշվի առնել հարձակողական գործողությունների վարման համար զինված ուժերի որակի բարելավման անհրաժեշտությունը՝ նպատակային գործընթացի միջոցով, որը, որպես կանոն տևում էր ութ ամիս, ներառյալ 18 շաբաթյա անհատական և ստորաբաժանումների կազմում հետագա պատրաստումը/ներդաշնակումը: Ուկրաինայի կամ նրա միջազգային գործընկերների կողմից պլանավորումը հազվադեպ էր իրականացվել նշված ծավալով, հատկապես քաղաքական շարակարգում: Բայց այս կերպ պլանավորելու անկարողությունը նշանակում էր, որ առկա ուժերը պիտանի չեն առաջադրված խնդիրը կատարելու համար: Հարձակման ընթացքում ամենամեծ հարվածները գումարտակային հարձակումն էր: Սա արտացոլում էր որակյալ շտաբային սպաների փոքր հաստիքակազմը, ովքեր ունակ էին ժամանակով համապատասխանեցնել գործողությունները ավելի մեծ ուժերի հետ: Ռուսական ստորաբաժանումներին գերազանցելու համար անհրաժեշտ էր մեծացնել այն ծավալը, որով կարող էին գործել Ուկրաինական ստորաբաժանումները:

Պլանավորման թերությունները

Գործողությունների սկզբնական հայեցակարգը, ինչպես նկարագրված էր ավելի վաղ, նախատեսում էր յոթ օրվա ընթացքում 12 բրիգադի ուժերով գործողություն իրականացնել՝ ճակատի 30 կմ հատվածում պաշտպանական բնագծերը ճեղքելու և Տոկմակը մեկուսացնելու նպատակով: Այսպիսի ուժերի կենտրոնացումով և առկա տեմպերով հնարավոր էր ճեղքումը իրականացնե: Սակայն, պահանջները սահմանող այս հայեցակարգը ծանրաբեռնված չէր փաստացի ներգրավված ուժերի սահմանափակումներով: Սկզբնական հայեցակարգը ողջամիտ էր: Բայց երբ հայեցակարգը վերածվեց մի պլանի, որն արտացոլում էր հավաքված ուժերի սահմանափակումները, անցած ժամանակը և, հետևաբար, հակառակորդի տեղաբաշխումը, բացահայտվեցին պլանավորման սխալները:

Նախևառաջ, գործողության հաջողությունն այն տեսքով, որով այն իրականացվեց, կախված էր ռուսական զորքերի թուլացումից, սակայն ուժերն ու միջոցները բավականաչափ կենտրոնացված չէին այդ արդյունքին հասնելու համար: Անհասկանալի է, թե ինչի հիման վրա էին պլանավորողները հույսը դնում: Փոխարենը, պլանավորումը, ըստ երևույթին, իրականացվել էր զգալի լավատեսության հիմքով: Դրա մի մասը, ըստ երևույթին, պայմանավորված էր այն համոզմունքով, որ Խարկովի տակ ռուսական զորքերի փլուզումը պայմանավորված էր բարոյականության պակասով, մինչդեռ այն պայմանավորված էր Ռուսաստանի բավարար զորքերի բացակայությամբ: Սա նոր խնդիր չէր, բայց հաշվի առնելով, թե որքանով ՆԱՏՕ-ի անդամները հույս ունեին փոխհատուցել հակառակորդի թվային գերազանցությունը, թվում է, թե արժե մեթոդաբանություն մշակել հակառակորդի բարոյական վիճակն ավելի ճշգրիտ գնահատելու համար: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան որոշ ժամանակ առաջ ընդգծել էր տեղեկատվական մանների և պատերազմի ճանաչողական ասպեկտի կարևորության մասին: Սակայն ակնհայտ է,

որ պլանավորողները սխալ են գնահատել Ռուսաստանի մտածելակերպն ու խոցելի տեղերն այդ առումով: Այսպիսով, թվում է, որ բավարար միջոցներ չկան, որպեսզի շտաբը կարողանա որոշել կամ գնահատել հակառակորդի բարոյական ոգին, որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ պլանավորել պարտության հնարավոր հետևանքները:

Ակնհայտ էր նաև, որ պլանավորողները չէին կարողացել գործողություններն իրականացնելու համար պատշաճ կերպով բաշխել ուժերը: Նոր ստորաբաժանումների կորիզ ձևավորելու համար ռազմաճակատից հետ կանչվելու փոխարեն, փորձառու զորքերը մնացին նվազող քանակով մեքենայացված տեխնիկայով և ուղարկվեցին տարբեր շեղող մանևրներ, ինչպիսիք են Բախմուտը, կամ հիմնական ուժերի թևերն ապահովելու գործողություններն իրականացնելու համար: Երբ այդ ստորաբաժանումների հարձակողական ուժերը հաջողության հասնելու նպատակով զորքեր տեղափոխվեցին, արդեն պակասում էր այդ ստորաբաժանումների ամենակարևոր միջոցները, ներառյալ ականազերծման սարքավորումները: Երկրորդ փուլում մարտի մեջ մտցված ստորաբաժանումներում նկատվել էր նաև տեխնիկայի որակի նվազում, այնպես որ ուկրաինական ստորաբաժանումները ստիպված էին ձեռնարկել ճեղքման գործողություններ՝ օգտագործելով MaxxPro-ն և այլ տեխնիկա, որոնք առաջադրանքը կատարելու համար հարմարեցված չէին:

Ուկրաինայի և նրա միջազգային գործընկերների կողմից համատեղ պլանավորմում հաշվարկների որոշ սխալներ էին թույլ տրվել: Օրինակ, մեծ նշանակություն էր տրվել խորը թիկունքին հասցված հարվածների հետևանքներին, որոնց նպատակը ռուսական պաշտպանության խափանումն էր: Չնայած Ղրիմին ուղղված արշավը լավ պլանավորված էր, բայց հիմնական ուժերին աջակցելու համար խորը մարտում կրիտիկական արդյունքի հասնելու համար չափազանց քիչ զինամթերք էր կիրառվել թիրախների չափազանց բազմազան փաթեթի դեմ: Բացի այդ, հեռահար նշանառու կրակը միաժամանակացվել էր մարտավարական գործողությունների հետ, որոնք թույլ պետք է տային լավագույնս օգտագործել ռուսական պաշտպանական համակարգի վրա գործադրվող ճնշումը:

Պլանավորման մեկ այլ հետաքրքիր տարր էր Ռուսաստանի բացահայտված ուժեղ կողմերը հաղթահարելու միջոցառումների բացակայությունը: Ռազմական խաղերի ժամանակ, որոնք անցկացվել էին Ուկրաինայի միջազգային գործընկերների հետ նույնիսկ հարձակումն սկսվելուց առաջ, ռուսական մի շարք հնարավորություններ դեռևս խնդրահարույց էին: Ռուսական ավիացիան այդ հնարավորություններից մեկն էր: Սակայն օպերացիան սկսվեց առանց ռուսական հարվածային ավիացիայի սպառնալիքին հակազդելու միջոցառումների: Ի վերջո, հոկտեմբերին ԱՄՆ-ը հավանություն տվեց ATACMS համակարգերի կիրառմանը՝ իրենց օդանավակայաններում ռուսական ուղղաթիռներին հարվածելու համար: Այս ամենը շատ լավ էր, բայց մինչև հոկտեմբեր ռուսական հարվածային ավիացիան ուկրաինական հարձակումը զսպելու գործում արդեն իր դերն խաղացել էր : Այդ ժամանակ ATACMS համակարգերի կիրառումը սահմանափակվեց և դա նպաստեց ռուսական համակարգերի աստիճանական շարքից դուս մղմանը, բայց թույլ չտվեց մանևրել: Բանն այստեղ այն չէր, որ ATACMS-ը ավիացիայի պատասխանն էր: Պարզապես Ռուսաստանը մարտավարական տեսանկյունից հարմարվեց հարվածների հաջորդող օրերին իր օդանավակայանների համար վտանգը նվազեցնելու ուղղությամբ: Բանն այն է, որ ոչինչ չի արվել ռիսկը նվազեցնելու

համար, երբ դա կարևոր էր: Այս խնդիրը չի սահմանափակվել ավիացիայի խնդրով: Որպես լուրջ խնդիր ճանաչվեց նաև ականապատ դաշտերը: Հարձակման սկզբում Ուկրաինան ուներ զգալիորեն ավելի քիչ ականազերծման միջոցներ, քան կարելի էր համարել դոկտրինով պահանջվող նվազագույն քանակը: Դա հանգեցրեց կանխատեսելի արդյունքների, որոնք որոշել էին Ուկրաինան և նրա գործընկերները նախնական զորավարժությունների ընթացքում: Այնուամենայնիվ, Ուկրաինայի գործընկերները շարունակեցին ականազերծման մեքենաների մատակարարումը Ուկրաինային մինչև օգոստոս: Երբ ԱՄՆ-ը տրամադրեց M117 մեքենան ՈՒԶՈՒ- ից պահանջվեց երկու ամիս ժամանակ որպեսզի տիրապետի դրան, ուստի M117-երը մինչև 2023 թվականի հոկտեմբեր ամիսը պատրաստ չէին կիրառմանը, այսինքն՝ հարձակումը լիարժեք գագաթնակետին հասնելուց հետո:

Հետաքրքիրն այն է, որ Ուկրաինայի միջազգային գործընկերները սպառազինությունը տրամադրել են ՆԱՏՕ-ի դոկտրինին լիովին անհամատեղելի ձևով, այնպես որ Ուկրաինան չկարողացավ վճռորոշ պահին կենտրոնացնել համապատասխան ուժերի և միջոցների կրիտիկական զանգվածը: Շատ առումներով այդ ձախողումը քաղաքական էր: ԱՄՆ-ը խորհուրդ է տվել Ուկրաինային տրամադրել DPICM–ը 2022 թվականի աշնանը, իսկ ATACMS-ը՝ 2023 թվականի սկզբին: Այս համակարգերի փոխանցումը հաստատվել էր ուշացումով: Հարցը, որին պետք է բախվեն ՆԱՏՕ-ի անդամները, այն է, թե արդյոք նրանց կառավարական համակարգերը առաջնորդներին խրախուսում են որոշումներ կայացնել այն ժամանակ, երբ դրանք պետք է կայացվեն, եթե դրանք ցանկալի արդյունք ունենան, թե համակարգը թույլ է տալիս ավելի, քան ընդունելի ուշացումներ:

Դ. Առաջացող մարտավարական խնդիրների բացահայտում

Լայնածավալ ճեղքման գործողություններ իրականացնելն ամենաբարդ խնդիրներից է: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Անտանտի տերություններին երեք տարի պահանջվեց հայեցակարգեր մշակելու և արևմտյան ճակատում գերմանական պաշտպանությունն արդյունավետորեն ճեղքելու համար: Այդպիսի գործողությունների համար անհրաժեշտ են մեծ ռեսուրսներ, հագեցած և պատրաստված ստորաբաժանումներ: Օրինակ, թեև Մեծ Բրիտանիան ունի բազմաթիվ ստորաբաժանումներ խնդիրների լայն շրջանակով, միայն Միացյալ Թագավորության 3-րդ դիվիզիայից է (որը դաշտային բանակի ամենաթանկ տարրն է) ակնկալվում, որ ի վիճակի է իրականացնել լայնածավալ հարձակողական օպերացիաներ, բայց ներկայումս նրա հագեցվածությունը բավարար չէ այն իրագործելու համար:

Հարձակողական ճեղքման հայեցակարգային հիմքը գրեթե չի փոխվել 1980-ականներին ցամաքային ճակատամարտի հայեցակարգի մշակումից ի վեր: Վերջին անգամ լայնածավալ հարձակողական առաջխաղացումը տեղի էր ունեցել արևմտյան ուժերի կողմից 1991 թվականին «Անապատի փոթորիկ» գործողության ընթացքում, և դա, կարծես, հաստատում էր ցամաքային մարտերի հիմքում ընկած հագեցվածությունը, ձևավորման կառուցվածքը, մարտավարությունը և Դոկտրինը: Մինչև 2023 թվականը 1991 թվականից ի վեր սովորական պատերազմի ընթացքում իրականացված միակ լայնածավալ ճեղքման գործողությունը 2020 թվականին Լեռնային Ղարաբաղը վերադարձնելու Ադրբեջանի գործողությունն էր: Սակայն այդ գործողությունն իրականացվել էր հայկական զինված ուժերի դեմ, որոնք 1980-

ականներից սկսած գրեթե չէին արդիականացվել: Այսպիսով, հաստատված բանաձևը հերթական անգամ հաջողվեց: «Իսլամական պետության» պատերազմի ժամանակ Իրաքում և Աֆղանստանում Թալիբանի դեմ ռազմական գործողությունների ժամանակ ճեղքման օպերացիաները պահանջում էին դաշտերը մաքրել ինքնաշեն պայթուցիկ սարքերից, բայց դրանք հրետանու կողմից չէին ականապատվել, և այդպիսով կոալիցիոն ուժերը թելադրում էին մանևրելու տեմպը: Ուստի խելամիտ է պնդել, որ 2023 թվականի ամռանը «Սուրովիկինի գիծը» ճեղքելու Ուկրաինայի փորձերը վերջին 30 տարվա ընթացքում լայնածավալ հարձակողական ճեղքման օպերացիաների առաջին փորձերն էին: Այս ընթացքում նոր տեխնոլոգիաները զգալի ազդեցություն են ունեցել բանակային մարտեր վրա: Ուստի արժե ուսումնասիրել ուկրաինական զինված ուժերի փորձը՝ գնահատելու, թե որքանով է հաստատված Դոկտրինը մնում ուժի մեջ, և որտեղ այն կարող է հարմարեցման կամ վերանայման կարիք ունենալ: Այս դասերը արդիական են ոչ միայն Ուկրաինայի զինված ուժերի համար, քանի որ նրանք փորձում են վերականգնվել և պատրաստվել ապագա հարձակողական օպերացիաներին, այլև Ուկրաինայի միջազգային գործընկերների համար, որոնք պետք է համոզիչ ուժ ունենան, եթե ցանկանում են Ռուսաստանին հետ պահել առաջիկա տարիներին Հյուսիսատլանտյան պայմանագրի 5-րդ հոդվածը վիճարկելուց:

2023 թվականի ընթացքում Ուկրաինայում ռազմական գործողությունները բացահայտեցին մի շարք պահանջներ և խնդիրներ, որոնց ՆԱՏՕ-ի ուժերը լայն ծավալով չեն բախվել, և որոնք արդյունավետ չեն արտացոլվել Արևմտյան դոկտրինում: Այս հարցերը պետք է դիտարկվեն ապագա ուժերի և օպերացիաների ժամանակ: Այդպիսի խնդիրներից մի քանիսը ներկայացված են ստորև:

Համակողմանի դիտարկում և կրակի ճշգրտություն

Հարձակման ժամանակ առաջնագծի և հակառակորդի թիկունքում մարտադաշտը դիտարկելու համար երկու կողմերն էլ լայնորեն օգտագործել են ԱԹՍ-ներ: Ռուսական զորքերը ուկրաինական հրետանու ոչնչացման և օժանդակ ստորաբաժանումների ուղղությամբ կետային հարվածներ հասցնելու համար ակտիվորեն օգտագործում է «Ланцет-3М» բարաժող զինամթերքը: Միևնույն ժամանակ, ուկրաինական զորքերը օգտագործում են ավելի ու ավելի շատ FPV դրոններ, քանի որ հաճախակի են անցնում պաշտպանության և նվազում է հրետանային զինամթերքի պաշարները: Երկու կողմերի համար էլ այդ հնարավորություններն ավելի արդյունավետ էին պաշտպանական, քան հարձակողական գործողությունների ժամանակ: Դա հիմնականում պայմանավորված էր նրանով, որ այս համակարգերն ավելի հեշտ է օգտագործել, երբ յուրային ուժերը ավելի քիչ մանևրելի են, քանզի դրանց կիրառումը սերտ մարտերում հակառակորդի առաջխաղացող ուժերի դեմ նշանակում է, որ նրանք ավելի մոտ են իրենց կառավարման ալեհավաքներին, քան հակառակորդի միջամտությանը, և քանի որ առաջ շարժման դեպքում հարձակվող կողմն է ավելի նկատելի:

Հարձակողական օպերացիաների համար ցածր բարձրությունների վրա ՌԷՊ և հակաօդային պաշտպանության միջոցների օգտագործումը իսկապես գոյություն ուներ նախորդ դոկտրինում: Սակայն, դա հիմնականում դիվիզիաների պարտականությունն էր: Այսօր բարձր ճշգրտության կրակ վարելու տեղայնացված հնարավորությունը նշանակում է, որ էլեկտրոնային պաշտպանության կարիք ունեն

բոլոր ստորաբաժանումները: Տեսականորեն, գալիք կազմավորումները պետք է կարողանան էլեկտրոնային պատնեշներ ստեղծել, և քանի որ ստորաբաժանումները դժվար թե ունենան հատուկ հակաօդային պաշտպանություն, համակարգերը պետք է լինեն բազմաֆունկցիոնալ, որոնք կարող են խոցել փոքր օդային թիրախներ: Էլեկտրոնային պաշտպանությունը չափազանց խոցելի է, եթե տեղակայված է ոչ մեծ թվով մասնագիտացված հարթակներում: Փոխարենը, էլեկտրոնային պաշտպանության մոդուլները պետք է լինեն ծրագրավորվող և համեմատաբար ինքնավար, և բացի այդ, դրանք պետք է լայնորեն տարածվեն: Ալեհավաքները կդառնան պաշտպանության համակարգի ամենակարևոր տարրը, որը խոցելի կլինի ուղիղ կրակի համար: Հետևաբար, դրանք պետք է փոխարինվեն, և ոչ թե լինեն միջամտության հաճախականություններ առաջացնող սարքի անբաժանելի մաս: Նավիգացիոն խափանումների ստեղծումը հատկապես կարևոր է տարածքը բարձր ճշգրտության զինամթերքից պաշտպանելու համար:

Միևնույն ժամանակ, առկա է վերը նշված երկընտրանքն առ այն, թե ինչպես է ուժը, որը պետք է ժամանակով սահմանափակ պաշտպանիչ գմբեթ ստեղծի ճշգրիտ կառավարվող զինամթերքի դեմ, կարող խուսափել սովորական հրետանու (չկառավարվող զինամթերքի) նկատմամբ սեփական խոցելիության բարձրացումից: Նախկին պատասխանը՝ պատասխան կրակով հաղթելը, միայն մասնակի լուծում է, քանի որ հետախուզական միջոցների բարձր ճշգրտությունն այժմ թույլ է տալիս օգտագործել ավելի քիչ քանակությամբ զենքեր առավել կենտրոնացված ազդեցություն ստանալու համար, դրանով իսկ բարձրացնելով զորքերը պաշտպանելու համար անհրաժեշտ ճնշման շեմը: Այսպիսով, զորքերը հեռահար հսկողությունից պաշտպանելու պահանջի հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև հնարավորություն ունենալ խոցել թշնամու հեռահար ԱԹՍ-ները կամ ցածր բարձրության վրա, բայց մինչև 10 կմ հեռավորության վրա, կամ միջին բարձրության վրա, որը գերազանցում է ՇԶՀՀ-ի խոցման սահմանը: Համակցված այն փաստի հետ, որ խոցված թիրախները հաճախ համեմատաբար էժան կլինեն, սա հիմնական մարտահրավերն է կարճ հեռահարության հակաօդային պաշտպանության միջոցների համար: Անհրաժեշտ է նաև խնդիրը հակամարտկոցային պայքարից տեղափոխել հակառակորդի հրետանու նախքան կրակ բացելը շարքից հանելուն: Սա կհանգեցնի սերտ մարտական հայեցակարգերի առաջացմանը, որոնք նախկինում ավելի արդիական էին հակաօդային և հակահրթիռային պաշտպանության համապարփակ քննարկման համար:

Էլեկտրամագնիսական մարտական տարածության կառավարում

Հակառակորդի համեմատ ճշգրիտ կրակ վարող ունակ ուժերը, անհամաչափ արդյունավետ կլինեն: Միաժամանակ կենտրոնացումը նվազագույնի հասցնելու ունակությունը կախված է տիրույթում կամ տեսանելիության սահմաններից դուրս գործողությունների համակարգումից: Դա կախված է էլեկտրամագնիսական սպեկտրի հասանելիությունից (ԷՄՍ): Արդյունքում, նույնիսկ առանց թշնամու ՌԷՊ-ի միջոցների, ԷՄՍ համակարգը դառնում է ծանրաբեռնված: Փոխազդող համակարգերի քանակը մեծանում է: Փոխանցվող տվյալների ծավալը մեծանում է: Եվ օգուտները, որոնք կարելի է ձեռք բերել ԷՄՍ -ի դեմ պայքարի ձախողման արդյունքում առաջացող խոցելիությունների նկատմամբ, մոտենում են այն կետին, երբ զինված ուժերը պետք է կարողանան հաղորդակցվել առանց իրենց հիմնական

համակարգերի, չնայած դա չի նշանակում, որ նրանք պետք է հաշտվեն կապի կորստին:

Անհրաժեշտ է հաշվի առնել ԷՄՍ -ի համար մղվող պայքարում կրակի և մանևրելու արդյունավետության վրա դրա ազդեցությունը: Պաշտպանությունում թրաֆիկի անվտանգությունն ապահովելու ու խոցելիությունը սահմանափակելու համար կարող են օգտագործվել սուրհանդակները, ցամաքային մալուխները և նախկինում կիրառվող այլ մեթոդները:

Հարձակման ժամանակ այդ տարբերակները կենսունակ չեն: Առանց հաճախականության մանրակրկիտ կառավարման, զինված ուժերը հակված են ԷՄՍ -ում լայնածավալ «եղբայրասպանության», այդ թվում՝ սեփական ԱԹՍ-ների արդյունավետության և կենսունակության նվազման: Սա լուրջ խնդիր էր Ուկրաինայում, և հաճախ հրամանատարներն ստիպված էին սահմանափակել իրենց զորքերի ռադիոէլեկտրոնային պաշտպանությունը՝ դրանով իսկ բարձրացնելով իրավիճակի վերաբերյալ իրենց սեփական իրազեկությունը, սակայն, միարժամանակ ազատություն էին տալիս հակառակորդի հետախուզական միջոցներին և կրակի վարմանը: Ռուսական զորքերը փոխում էին իրենց հաճախականությունները յուրաքանչյուր 24 ժամը մեկ՝ վերացնելով կոնֆլիկները ԱԹՍ-ների երթուղիներում և սինխրոնացնելով ՌԷՊ միջոցները մանևրների հետ, որպեսզի ճշգրիտ կոորդինատներ ստանալու անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային պաշտպանությունը կարճ ժամանակով անջատվի: Դա ձեռք էր բերվել նույնիսկ այն դեպքում, երբ ՌԴ ԶՈՒ-ն ՌԷՊ-ի հնարավորությունները բաշխել է վաշտային մակարդակում: Ուկրաինայի համար համակարգերի բացարձակ պակասը նվազեցրեց առաջադրանքի բարդությունը, բայց, այնուամենայնիվ, ՌԷՊ սարքերի մեծ մասի կառավարումն իրականացվում էր բրիգադային շարակարգում, և նույնիսկ այդ ժամանակ դրանք հաճախ ամբողջությամբ չէին օգտագործվում այն դժվարությունների պատճառով, որոնք դա ստեղծեց հրամանատարության, կառավարման և հետախուզության միջոցների համար:

Ծրագրային ապահովման կողմից սահմանված համակարգերին բավարար թողունակություն հատկացնելու անհրաժեշտությունը լայնաշերտ միջամտությունից խուսափելու և միևնույն ժամանակ ժամանակակից բանակներում համակարգերի բավարար սպեկտր ունենալու համար էական մարտահրավեր է ստեղծում: Բացի այդ, զինծառայողների մեծմասնությունը պատրաստ չէ դրանք գործարկելու համար: Այնուամենայնիվ, սա առանցքային խոչընդոտ է բոլոր մակարդակներում պլանավորման համար: Անհրաժեշտ է, որ կապավորներն անցնեն այլ պատրաստություն՝ այդ պահանջներին համապատասխանելու համար, ընդհուպ մինչև բրիգադի և մարտական խմբի մակարդակ: Միևնույն ժամանակ, զորատեսակների հրամանատարները պետք է ավելի լավ պատրաստված լինեն արտակարգ իրավիճակների պայմաններում ՌԷՊ միջոցների օգտագործման և զորավարժությունների պլանավորման համար: Կապավորների որակավորման բարձրացումը մեծ նշանակություն չունի, եթե այլ ստորաբաժանումների միջև փոխըմբռնման մակարդակը ավելի շուտ տարբերվում է, քան համընկնում, ինչը հանգեցնում է հնարավորությունների անտեսմանը կամ դրանց սխալ կիրառմանը:

Ուժերի և միջոցների թարմացման արագացված ցիկլեր

Նոր չէ այն պնդումը, որ նորարարական միջոցներն առավելագույն ազդեցություն ունեն առաջին օգտագործման ժամանակ, իսկ հետո ավելի քիչ առավելություններ են տալիս հակառակորդի հարմարման դեպքում: Այս խնդիրը լավ ուսումնասիրվել է Առաջին համաշխարհային պատերազմից հետո : Ճիշտ է, որ այսօր ծրագրակազմով որոշված համակարգերը, չնայած ծայրաստիճան խոցելի են հատուկ էլեկտրոնային հակազդման միջոցների համար, այնուամենայնիվ անհամաչափ արդյունավետ են ծրագրակազմով չորոշված համակարգերրի հնարավորությունների համեմատ: Արդյունքում, զինված ուժերը պետք է օգտագործեն ծրագրային-որոշող համակարգեր, որպեսզի մրցունակ լինեն, միարժամանակ պետք է նկատի ունենալ, որ ծրագրային-որոշող հնարավորությունների առավելագույն արդյունավետությունը օպերատիվ առումով կարճատև է, իսկ հակառակորդի հարմարվելուց հետո դրանք դառնում են մարտավարապես անկայուն:

Դա տարբեր ձևերով դրսևորվեց 2023 թվականի հարձակման ժամանակ: Նախ, բարձր ճշգրտության զինամթերքի կիրառման ազդեցության մասին Արևմուտքի ենթադրությունները չափազանցված էին, որն ապացուցվեց հակառակորդի հակաքայլերով: Դրանից տուժեց Excalibur-ը և GMLRS-ը: Երկրորդ՝ Ուկրաինան հայտնաբերց, որ ԱԹՍ-ներում նման համակարգեր կիրառելիս դրանց արդյունավետությունը պահպանելու համար անհրաժեշտ է ինչպես ծրագրային ապահովման, այնպես էլ ռադիոկայանների թարմացման բարձր արագություն: Սակայն դա բացասաբար է անդրադառնում արտադրության ծավալների մեծացման և, հետևաբար, դրա տեխնիկական առավելություններից օգուտ քաղելու ունակության վրա: Փոխարենը, միչև արդյունաբերությունը կկարողանա լուծում առաջարկել նորարարությունները կփորձարկվեն փոքր և կընդունվեն չափավոր ծավալներով: Սակայն մինչ արտադրությունը կարագանար, հակառակորդն արդեն բարդ հակաքայլեր էր մշակել:

Ակնհայտ է, որ այսպիսի փոխգործակցությունը կդառնա ապագա հակամարտությունների բնութագրական առանձնահատկություն: Սա լուրջ խնդիրներ է առաջացնելու ՆԱՏՕ-ի զինվորականների կողմից արդյունաբերության հետ պայմանագրերի կնքման պրակտիկայի, համակարգերի ստեղծման և գնահատման մեթոդների, ինչպես նաև այն բանի համար, թե ինչպես է իրականացվելու անձնակազմի պատրաստումը և համակարգերի անվտանգությունը: Ակնհայտ է, որ տեխնոլոգիական առավելության և, հետևաբար, որակական առավելության պահպանումը պետք է հիմնված լինի մարտավարական ստորաբաժանումներում ծրագրային ապահովման ինժեներների առկայության վրա, ովքեր պետք է ունակ լինեն միջամտել համակարգերի գործունեությանը և ապարատային բաղադրիչներին, ինչպիսիք են ռադիոկայաններն արագ փոխարինելու ունակությունը՝ առանց դրանց կցված հարթակները դեն նետելու անհրաժեշտության: Մատակարարները պետք է շահագրգռված լինեն ենթահամակարգեր տրամադրելու հարցում և գիտակցեն, որ իրենց արտադրանքը հարմարեցնելուն պես նրանք ցիկլային փոփոխություններ պետք է կատարեն, այլ ոչ թե բարելավեն մեկ արտադրանքը և ձգտեն ստիպել օգտագործողին շրջանցել դրանք: Շատ պետություններում դա պահանջելու է փոփոխություններ կատարել կարգավորող օրենսդրության մեջ: Սակայն, օպերատիվ, այլ ոչ թե մարտավարական

ժամկետների շրջանակում դա կարևոր նշանակություն ունի արագությունը պահպանելու համար:

Մատակարարման դիվերսիֆիկացում «վերջին մղոնում»

Ճակատային գծի շարունակական մոնիտորինգը, որը զուգորդվում է էժան և ծավալային առումով բարձր ճշգրտության ԱԹՍ-ների հարվածներով, հատուկ սպառնալիք է ներկայացնում հարձակմանն ընդգրկված ուժերի մատակարարմանը, քանի որ առկա ցամաքային հաղորդակցությունները սահմանափակված են ճեղքման հատվածներով և, հետևաբար, հեշտ է հետևել: Բացի այդ, քողարկումը և այլ մեթոդները, որոնք ուղղված են պաշարների մատակարարման համար տրանսպորտային միջոցների աշխատունակությանը, հակառակորդի համար նշանակություն չունեն, թե երբ են նրանք շարժվելու հայտնի երթուղիներով: Ավելին, առաջապահ ստորաբաժանումների վրա հակառակորդի հակագրոհների գործադրվող ճնշումը նշանակում է, որ նրանք կարող են հարվածել հենց այն պահին, երբ համալրումն ու վիրավորների տարհանումն ամենակարևորն են՝ սահմանափակելով հարձակվող ուժերի հնարավորությունները՝ պայմաններ ստեղծելու վերջին մղոնը մատակարարելու համար: Պաշարների մատակարարման տրանսպորտային միջոցները նույնպես պետք է գործարկվեն հեռավորական ականանապատված տարածքները հաղթահարելիս:

Այս հարցի պատասխաններից մեկն այն է, որ տեղաշարժվելու հնարավորություններ ստեղծելու համար վերջին մղոնի համալրումը դառնում է համազորային գործողություն, որը պահանջում է բազմամակարդակ հակաօդային պաշտպանություն, հակամարտկոցային կրակ, ՌԷՊ, ինժեներական աջակցություն և այլ միջոցներ: Սա չափազանց ռեսուրսատար գործընթաց է, իսկ Ուկրաինայի դեպքում ռեսուրսները քիչ են : Որոշակի հանգամանքներում համալրումը գուցե պետք է դառնա օժանդակ ուժերի հիմնական խնդիրը, բայց դա խիստ անցանկալի է և, ամեն դեպքում, սահմանափակում է համալրումների քանակը, որոնք կարող են իրականացվել: Չնայած դա ուղղակիորեն կապված չէ վերջին մղոնի համալրման հետ, բայց ավելի քիչ պաշտպանված աջակցության հարթակներ, ինչպիսիք են հրետանին և բուժապահովումը, բարձր ճշգրտության հարված հասցնելու մշտական սպառնալիքի պատճառով չկարողանալով առաջ մղել իրենց սեփական զորքերի առաջին գծում (FLOT), ևս մեկ մարտահրավեր է, որը սահմանափակում է մարտական ստորաբաժանումների առաջխաղացման, սատարման և աջակցության տրամադրման ունակությունը:

Որպես այլընտրանք, անհրաժեշտ է գտնել "վերջին մղոնի"մատակարարումները դիվերսիֆիկացնելու ուղիներ: Մասնավորապես, Մեծ Բրիտանիան ակտիվորեն փորձարկում է անօդաչու համակարգերը: Մինչ ուղղաթիռները թանկ են շահագործման մեջ և խոցելի են ռուսական հակաօդային պաշտպանության կոցմից, տակնոցներով անօդաչու թռչող սարքերը կարող են միջոց դառնալ պարենի, ջրի և զինամթերքի տեղափոխման համար: Ականազերծման համար առանց անձնակազմի ցամաքային տրանսպորտային միջոցների օգտագործումը նաև հնարավորություն կտա ընդլայնել և բազմապատկել այն գոտիների քանակը, որոնցով կարող են մատակարարվել առարկաները: Ներկայումս առանց անձնակազմի ցամաքային տրանսպորտային միջոցների տեխնոլոգիան իդեալական չէ արգելապատնշները հաղթահարելու համար, քանի որ դրանց առանցքային տվիչները հաճախակի

վնասվում են և կախված են հեռակառավարումից, մինչդեռ նման կառավարումը պետք է իրականացվի կամ մեքենայի մոտակայքում, կամ ֆիքսված մալուխի միջոցով: Այնուամենայնիվ, յուրային ուժերի առաջնագծի հետևում այդպիսի համակարգերը զգալի ներուժ ունեն, և այս ոլորտում փորձերը կարող են զարգացնել իրենց հնարավորությունները այնքան ժամանակ, միչև կկարողանան աջակցել հարձակողական ճղքման գործողություններին: Նյութական միջոցների թողունակության բարձրացումը և, այդպիսով, գրոհային ստորաբաժանման հասանելիության և կայունության բարձրացումը թույլ կտա ժամանակ շահել ճեղքման հատվածի ընդլայնման, լրացուցիչ ուժեր տեղափոխելու և, ի վերջո, տեմպը պահպանելու համար: ԱԹՍ-ով տարհանումը ավելի բարդ է, բայց շատ դեպքերում այն կարող է զգալիորեն բարձրացնել գոյատևման մակարդակը՝ թույլ տալով վիրավորներին տեղափոխել բարդ տեղանքով կամ դժվարամատչելի վայրերից դեպի տեղակայված բժշկական հաստատություն, որտեղ կարող են մասնագիտական բժշկական օգնություն ցուցաբերել: Գոյատևման մակարդակի բարձրացումը բարոյական վիճակի վրա դրական ազդեցություն ունենալու և նպաստելու է դինամիկայի պահպանմանը:

Թերևս ամենակարևոր համատեքստը, որում ՆԱՏՕ-ի անդամները պետք է դիտարկեն այս հարցը, այն է, թե ինչպես է այն առնչվում սահմանային անցակետերին: Ռուսաստանի վերահսկողությունը Խերսոնի շրջանի նկատմամբ ի վերջո անկայուն դարձավ կապված Ուկրաինայի՝ հաղորդակցության հանգույցները արգելափակելու հնարավորության հետ: Ուկրաինայի որոշումը՝ չօգտագործել իր հնարավորությունները Կրինկիում, թելադրված էր այն գնահատականով, որ բավական մեծ ուժ, որը կարող էր նշանակալից ազդեցություն ունենալ, չի կարող մատակարարվել Դնեպրի միջոցով: ՆԱՏՕ-ի Արևելյան թևի տեղանքի ցանկացած վերլուծություն ցույց է տալիս, որ ճահճապատ տարածքները հանդիսանում են լանդշաֆտի սովորական տարր: Հետևաբար, ուսումնասիրության կարևորագույն հայեցակարգային ոլորտն այն է, թե ինչպես ՆԱՏՕ-ի անդամները կարող են զարգացնել դրանց միջոցով անցումներ սահմանելու և պաշտպանելու հնարավորությունները:

Կրիտիկական ապահովման համակարգերի խոցելիությունը

Վերջին հիմնական խնդիրը, որը պետք է հայեցակարգային կերպով լուծվի, կրիտիկական ապահովման համակարգերի խոցելիությունն է, ինչպիսիք են ինժեներական մեքենաները: Պատմականորեն այս խնդիրը լուծվել է այդ հարթակների հուսալի պաշտպանությամբ և հիմնական մարտական տանկերով ծածկույթի ապահովմամբ: Հայեցակարգն այն էր, որ չնայած ՀՏԿՀ օպերատորները և հակառակորդի հիմնական մարտական տանկերը կփորձեն հարձակվել ճեղքող մեքենաների վրա, դա կբացահայտի նրանց դիրքերը և թույլ կտա նրանց թիրախավորել և ոչնչացնել ուղիղ կրակով: Հոգեբանական տեսանկյունից, նման արագ և մահացու արձագանքման սպառնալիքը հանգեցնում է սպառնալիքների դրսևորման ծավալի նվազմանը: Արագությունը նվազեցնում է այն ժամանակը, որը հակառակորդը կարող է ծախսել մարտական գործողություններն անվտանգ իրականացնելու համար: Ժամանակակից պայմաններում օպերատիվ դիտարկման այս հայեցակարգը լուրջ թերություններ ունի: Խնդիրն այն է, որ աճող նախազգուշացման համակարգերի թվական աճը՝ սկսած FPV անօդաչու թռչող

սարքերից մինչև տեսադաշտից դուրս գտնվող ՀՏՀՀ-ները և անօդաչու թռչող սարքերի վրա տեղադրված հրետանային զինամթերքի լազերային նշանակետերը, կարող են գործարկվել և թիրախավորվել թաքնված դիրքերից: Սա նշանակում է, որ հնարավոր է ընտրել կոնկրետ զենք՝ տվյալ թիրախը խոցելու համար: Դա նաև մեծացնում է այն ժամանակային շրջանակը, որի ընթացքում այն կարող է թիրախավորվել, քանի որ նրանք, ովքեր կրակում են այդ զինամթերքից, կարող են առանց գնդակոծության ենթարկվելու անհանգստության, մի քանի անգամ կրակել և կենտրոնանալ իրենց զինամթերքի ուղղորդման վրա: Արդյունքում առաջանում է ապահովման կարևոր միջոցների խոցման մեծ հավանականություն:

Այս խնդրի լուծումը պահանջում է հարձակողական գործողությունների ընթացքում ճնշելու և ապահովման միջոցների մշակման նոր մոտեցումներ: Հարձակողական գործողությունների ընթացքում բարաժող զինամթերքը, նշանակետի կոորդինատներով հագեցած ՌԷՊ միջոցներով, ճնշելու համար կարող է թույլ տալ հարվածներ հասցնել համակարգերի օպերատորներին, ովքեր նշանակետերի տեսադաշտից դուրս գտնվում են անվտանգ պայմաններում: Դրա համար Ланцет-3М-ի անալոգը շատ օգտակար կլինի: Բրիգադի մակարդակում կպահանջվի Ուկրաինական ՌԷՊ միջոցների քանակի ավելացում՝ թշնամու անօդաչու թռչող սարքերի օպերատորներին հայտնաբերելու և նրանց ոչնչացնելու համար: Պաշտպանական նպատակներով, բազմասպեկտորային ծխածակույթի կիրառումը (չնայած այն ամբողջությամբ չի լուծի խնդիրը) նույն պես օգտակար կլինի:

Այնուամենայնիվ, ջանքերի կենտրոնացման ամենակարևոր ուղղությունն այն է, որ եթե այդ տրանսպորտային միջոցները կարող են ի թիվս այլոց հայտնաբերվել, ապա ենթադրվում է, որ դրանք դուրս կմղվեն: Հետևաբար, ավելի շատ մեքենաներ են պահանջվում: Ներկայումս այդ մեքենաները հեղինակավոր ակտիվներ են, լավ են պաշտպանված և ունակ են կատարել մի շարք գործառույթներ: Ուստի, ինժեներական ստորաբաժանումներում տրանսպորտային միջոցների քանակը պետք է ավելանա, միևնուն ժամանակ հարթակների քանակի աճը հասանելի դարձնելու համար դրանց ճկունությունն ու բարդությունը պետք է նվազեցվեն: Բացի այդ, պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնել առաջադրանքների դիվերսիֆիկացմանը, որոնք կարող են լուծվել այլ զրահապատ մեքենաների վրա տեղադրված մոդուլների միջոցով: Եթե այդպիսի համակարգերը թիրախ են, ապա խնդիրը պետք է լինի նվազեցնել նպատակակետերի քանակը, որոնք արգելապատնեշները հաղթահարելու ունակության համար միակ խոցելի ուժեր են: Հատկանշական է, որ Իսրայելը, մտնելով Գազա, որոշել էր, որ ինքնաշեն պայթուցիկ սարքերի կիրառման ենթադրյալ սպառնալիքը հաղթահարելու համար յուրաքանչյուր բրիգադին անհրաժեշտ է 20 զրահապատ D9 բուլդոզեր: D9-ը կարող է իդեալական չլինել Ուկրաինայում մարտական գործողությունների համար, բայց նմանատիպ մեքենաների պատվերների խտությունը լավ չափանիշ է:

Հարթակների թվի աճի անհրաժեշտությունը խոսում է այդ խնդիրների լուծման համար նախատեսված նախագծերի առաջնահերթությունների փոփոխման անհրաժեշտության մասին:

Եզրակացություն

2023 թվականին Ուկրաինայի հարձակողական գործողությունների ձախողման պատճառները կարելի է համառոտ բնութագրել որպես անձնակազմի և կարևոր նյութական միջոցների, համապատասխան ուժերի պատրաստման և համակարգման համար ժամանակի, որոշակի ուղղություններում անձնակազմի սխալ բաշխման և հայտնաբերված մի քանի մարտավարական խնդիրների լուծումների բացակայություն: Որպեսզի այդ սխալները չկրկնվեն պահանջում է ապահովել ուժերի մոբիլիզացիայի ավելի մտածված և երկարատև գործընթաց, Իսկ Ուկրաինայի միջազգային գործընկերները իրենց հայտարարած նպատակներին համապատասխան պետք է շտկեն ՍՈՏ-ի տրամադրման գործընթացը, այլ ոչ թե ապահովեն այն ամենով, ինչը քաղաքականապես հարմար է կարճաժամկետ հեռանկարում: Հաշվի առնելով, որ այս խնդիրների լուծումը պահանջում են Եվրոպայի արդյունաբերության մոբիլիզացում, որը ի դեպ սկսվել է ուշացումով, որոշ ժամանակ պահանջելու, մինչև Ուկրաինան ի վիճակի կլինի վերսկսել խոշոր հարձակողական օպերացիաները: Պատերազմի վերջնական դադարեցման համար բարենպաստ պայմանների ստեղծումը պետք է իրականացվի միջանկյալ ժամանակահատվածում նախապատրաստվելու միջոցով:

Հակամարտության ներկա փուլում Ուկրաինայի զինված ուժերը կենտրոնացած են Ռուսաստանի Դաշնությանը առավելագույն վնաս հասցնելու, այլ ոչ թե ամեն գնով Ուկրաինական տարածքների ազատագրմանը: Մարտի դաշտում Ուկրաինայի զինված ուժերը առաջնահերթ ուշադրություն են դարձնում այն համակարգերի ոչնչացմանը, որոնք ՌԴ զինված ուժերը կփորձեն փոխարինել կամ վերանորոգել: Ուկրաինայի զինված ուժերը նաև լայնածավալ պաշտպանական դիրքեր են կառուցում, որպեսզի առավելագույնի հասցնեն ՌԴ ԶՈՒ կորուստները մարտի դաշտում ձեռք բերված ցանկացած հաջողության դեպքում: Վնասի պայմանավորված այս մոտեցումը նպատակ ունի հնարավորինս շատ ժամանակ շահել, ինչպես ուժեր ստեղծելու, այնպես էլ երկրի ներսում վնաս պատճառելու համար: Ուկրաինայի միջազգային գործընկերների համար հրետանային զինամթերքի և հեռահար հարվածային համակարգերի տրամադրումը ամենակարևորն է այդ ջանքերին աջակցելու համար:

Ուկրաինայի դեմ ագրեսիան շարունակելու Ռուսաստանի կարողությունը հիմնականում նրա խոշոր ֆինանսական ռեզերվներն են: Պայմանագրային զինծառայողներին բարձր աշխատավարձ վճարելու հնարավորությունը թույլ է տալիս Ռուսաստանին վերականգնել զինված ուժերը, իսկ նավթաքիմիական արտադրանքի արտահանումից ստացված գումարները թույլ են տալիս Ռուսաստանին ընդլայնել ռազմական տեխնիկայի արտադրությունը, նույնիսկ այն դեպքում, երբ պատժամիջոցները և մատակարարման շղթայի խափանումը հանգեցնում է գների բարձրացմանը: Այսպիսով, Ուկրաինան թիրախավորում է Ռուսաստանի նավթագազային ենթակառուցվածքը, որպեսզի սկզբնական փուլում կրճատի նրա պահուստները, իսկ հետո նաև իրացվելի կապիտալի առկայությունը: Ուկրաինայի միջազգային գործընկերները կարող են աջակցել այդ ջանքերին խիստ պատժամիջոցների միջոցով՝ թիրախավորելով Ռուսաստանի պաշտպանական արդյունաբերության արտադրական հզորությունները և մատակարարման գլոբալ շղթաները, որոնք թույլ են տալիս Ռուսաստանին պատերազմ վարել:

Ռուսաստանին վնաս հասցնելու ջանքերի մեկ այլ ուղղություն է տեղեկատվական գործողությունների կիրառումը՝ ռուբլու նկատմամբ ռուսների վստահությունը նվազեցնելու և գնաճը խթանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Հակամարտության հետևանքները շոշափելի են դառնում Ռուսաստանի բնակչության համար, և դրա համար մեղքը նրա պաշտոնյաների վրա բարդելը մեծացնում է վտանգը Ռուսաստանի կառավարության համար, քանի որ պատերազմը ձգձգվում է:

Ժամանակ շահելը և ռուսական զինված ուժերի ընդլայնումը դանդաղեցնելը հարձակողական մարտական ուժի վերականգնմանն աջակցելու ուղիներ են: Այս հզորությունը վերականգնելու համար Ուկրաինան պետք է մոբիլիզացնի զորքերը, որոնք նա անմիջապես չպետք է ուղարկի մարտի դաշտ՝ ռոտացիան ապահովելու համար, այլ փոխարենը թույլ կտա նրանց մարզվել զորամասերի և ստորաբաժանում-ների կազմում, մինչև նրանք դառնան մարտավարապես հմուտ: Դրա համար անհրաժեշտ է շտաբային զորավարժություններ անցկացնելու հնարավորություն, որպեսզի ուկրաինական ստորաբաժանումները կարողանան լայնածավալ գործել: Նման կազմավորումները ղեկավարող սպաները նույնպես պետք է ծանոթ լինեն էլեկտրոնային պաշտպանության, հետախուզության և հարձակման կիրառմանը, որպեսզի կարողանան պաշտպանել իրենց ստորաբաժանումները գործարկելուց հետո:

Լրացուցիչ ուժերի ներդրման պլանավորումը չպետք է կապված լինի քաղաքական ակնկալիքներով որոշված ժամկետների հետ: Դրա փոխարեն Ուկրաինայի զինված ուժերը պետք է պլանավորեն նախապատրաստական օպերացիա, որպեսզի պայմաններ ստեղծեն հարձակողական գործողությունները իրականացնելու համար: Մինչ ստեղծվում են կրիտիկական պայմաններ, Ուկրաինայի միջազգային գործընկերները պետք է համագործակցեն այդ ստորաբաժանումների հետ՝ ռուսական հեռահար կրակային միջոցներից բխող սպառնալիքի հաղթահարման մեթոդներ մշակելու համար: Դրանք ներառում են արդյունավետ հակահետախուզության միջոցներ և հարձակողական օպերացիաների մատակարարման ուղիները պաշտպանելու ունակություն, ինչպես նաև հարձակողական գործողությունների ապահովման հիմնական միջոցներ: Եթե այդ միջոցները չձեռնարկվեն, Ուկրաինան կարող է երկարացնել հակամարտությունը՝ չփոխելով դրա հետագիծը, ինչը ողբերգական հետևանքների կհանգեցնի ինչպես երկրի, այնպես էլ Եվրոպայի անվտանգության համար:

Աղբյուր՝ Preliminary Lessons from Ukraine’s Offensive Operations, 2022–23

Հեղինակների մասին

Ջեք Ուոթլինգը RUSI-ի ցամաքային ռազմական օպերացիաների ավագ գիտաշխատող է: Նա սերտորեն համագործակցում է բրիտանական զինվորականների հետ օպերացիաների հայեցակարգերի և ապագա օպերատիվ իրավիճակի գնահատումների մշակման գործում, ինչպես նաև իրականացնում է ժամանակակից հակամարտությունների օպերատիվ վերլուծություն: Նա շատ է աշխատել Ուկրաինայում, Իրաքում, Եմենում, Մալիում, Ռուանդայում և նրա սահմաններից դուրս: Ուոթլինգը Վաշինգտոնում գտնվող Վիլսոնի կենտրոնի Գլոբալ հետազոտող է:

Ալեքսանդր Վասիլևիչ Դանիլյուկը պաշտպանության, անվտանգության և հետախուզության ոլորտում երկար տարիներ սերտորեն համագործակցել է Ուկրաինայի պետական կառույցների հետ: 2014 թվականին եղել է Ուկրաինայի պաշտպանության նախարարի գլխավոր խորհրդականը: Հետագայում ծառայել է որպես Ուկրաինայի արտաքին հետախուզության ծառայության ղեկավարի հատուկ խորհրդական, Ուկրաինայի Զինված ուժերի գլխավոր հրամանատարի օգնական, և երկար տարիներ եղել է հիբրիդային սպառնալիքներին հակազդելու խորհրդարանական աշխատանքային խմբի անդամ: Վերջին մի քանի տարիների ընթացքում եղել է Ուկրաինա–ՆԱՏՕ հիբրիդային սպառազինությունների վաղ հայտնաբերման և դրանց հակազդման հարթակի համակարգողը: Նրա գործնական և ակադեմիական գիտելիքների հիմնական ոլորտը՝ Ռուսաստանում բազմաչափ ռազմական գործողություններն են, Ռուսաստանի և խորհրդային հատուկ ծառայությունների ակտիվ միջոցառումներն ու խափանումներն են, ինչպես նաև ազգային և հասարակական մոտեցումներն են ռուսական հիբրիդային ագրեսիային հակազդելու վերաբերյալ:

Նիկ Ռեյնոլդսը RUSI-ի գիտաշխատող է, ով զբաղվում է ցամաքային պատերազմներով: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է ցամաքային զորքերը, ռազմական խաղերը և սիմուլյատորները: Նախքան RUSI -ին միանալը նա աշխատել է Constellis-ում: Լոնդոնի Քինգս քոլեջում (KCL) ստացել է ռազմական հետազոտությունների բակալավրի աստիճան և հակամարտությունների, անվտանգության ու զարգացման մագիստրոսի կոչում: Ժամանակին KCL-ում նա ղեկավարում էր KCL Crisis Team-ի օպերատիվ խումբը, որը զբաղվում է ճգնաժամերի մոդելավորման լայնածավալ միջոցառումների կազմակերպմամբ: